ՋԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ

2007

http://jessup.ayla.am

ՖԻԼԻՊ ՋԵՍԱՓԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2
Ի՞ՆՉ Է ՋԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ 3
ՋԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ 4
- Մրցույթի պատմությունը 4
- Մրցույթը տարբեր երկրներում 5
- Մրցույթի անցկացման կարգն ու կանոնները 9

ՋԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 19
- Մրցույթի պատմությունը Հայաստանում 19
- «2007 Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը Հայաստանում 22
- Մրցույթի կազմակերպիչները 26
- «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն 26
- Հայաստանի իրավաբանական հիմնադրամ 28
- «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերություն 28
- «2007 Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի աջակիցները 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋԵՍԱՓԻ ԱԿՈՒՄԲԸ 32
- Ակումբի ստեղծումը 32
- Ակումբի կանոնակարգը 34
- Ակումբի գործունեությունը 2006թ.-ի ընթացքում 37

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ 41
ՎԵՐՋԱԲԱՆ 42

ՆԱԽԱԲԱՆ

Այսօր տեղեկատվության և գիտելիքների համեմատաբար մատչելիության պայմաններում մրցունակ կարող են լինել միայն այն անձինք ու կառույցները, որոնք կարողանում են ճիշտ օգտագործել իրենց ունակությունները: Իսկ օրեցօր զարգացող ու փոփոխվող աշխարհում կողմնորոշվելու և գիտելիքներն ու ունակությունները ճիշտ օգտագործելու համար անհրաժեշտ է անընդհատ հաղորդակից լինել կատարվող փոփոխություններին ու պրակտիկային: Նույն սկզբունքը գործում է նաև իրավունքի ոլորտում: Այդ իսկ պատճառով Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իր գործունեության ուղղություններից մեկն է դարձրել նոր սերնդի այնպիսի իրավաբանների ուսուցումը, որոնք օժտված կլինեն մտքի ճկունությամբ և կկարողանան ճիշտ կիրառել իրենց գիտելիքները անցումային փուլում գտնվող, դեռևս անկայուն օրենսդրական դաշտ ունեցող պետության իրավակիրառ պրակտիկայում: Այդ նպատակի իրականացմանն ուղղված միջոցառումներից է նաև «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի կազմակերպումը: Մրցույթն ունի շուրջ կեսդարյա պատմություն և համարվում է միջազգային իրավունքի ոլորտում ամենահեղինակավոր մրցույթն աշխարհում, իսկ Հայաստանում այն կազմակերպվում է յոթերորդ տարին:

Թեև մրցույթի՝ իրավաբան-ուսանողների համար ունեցած արդյունավետությունն աստիճանաբար աճում է, բայց մրցույթի կազմակերպիչները չեն դադարում Հայաստանում դրա առավել զարգացմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված գործունեությունը: Այդ էր պատճառը, որ ստեղծվեց Հայաստանի Ջեսափի ակումբը, մի մարմին, որը կարող է իրապես աջակցել վերոնշյալ նպատակի իրականացմանը: Ջեսափի ակումբը դեռևս իր առաջին քայլերն է անում՝ ուղղված իր առջև դրված խնդիրների լուծմանը: Ջեսափի ակումբն իր մեջ կրում է Ջեսափի մրցույթի ոգին, քանզի միավորում է մարդկանց, որոնք այս կամ այն կերպ անմիջական մասնակցություն ունենալով մրցույթին՝ պատրաստ են ջանքեր չխնայել մրցույթի ավանդույթների պահմանման և մրցույթին նոր շունչ հաղորդելու համար:

Սույն գրքույկն ընթերցողին կարող է ամբողջական ինֆորմացիա տրամադրել Ջեսափի մրցույթի մասին, դրա ստեղծման, անցկացման կարգի, հայաստանյան թիմերի ցուցաբերած արդյունքների, մրցույթի կազմակերպման գործում իրենց ներդրումն ունեցած անձանց և կազմակերպությունների, Ջեսափի ակումբի գործունեության մասին և ուղեցույց կլինի մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող իրավաբան-ուսանողների համար:

ԻՆՉ Է ՋԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ

Միջազգային իրավունքին նվիրված Ջեսափի անվան մրցույթն ամբողջ աշխարհում անց է կացվում դատախաղի տեսքով: Մրցույթին մասնակցում են 2-5 իրավաբան ուսանողներից բաղկացած թիմեր, որոնք, ստանալով կազմակերպիչների կողմից մրցույթի թեման և անհրաժեշտ փաստաթղթերը, հետազոտում և կազմում են հայցադիմումներ, որոնց շուրջ բանավոր մրցափուլում ծավալվում է թիմերի բանավեճը: Հայցադիմումները գրվում են հիպոթետիկ գործի շուրջ՝ միջազգային իրավունքի բնագավառից: Մրցույթին մասնակից բոլոր երկրների համապատասխան գրասենյակները ամեն տարի ստանում են մրցույթի գլխավոր կազմակերպիչ Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի կողմից մշակված երևակայական դատական գործը: Մասնակից երկրներում նախօրոք անցկացվում են ազգային կամ տարածաշրջանային մրցափուլեր, որոշելու համար այն բուհը, որը կներկայացնի տվյալ երկիրը միջազգային մրցափուլում: Ազգային ու տարածաշրջանային մրցափուլերն անց են կացվում ամեն տարվա դեկտեմբերից փետրվարն ընկած ժամանակահատվածում: Մրցույթի և՛ ազգային, և՛ միջազգային մրցափուլերում թիմերը, ներկայացնելով այս կամ այն մտացածին երկիրը, հանդես են գալիս Ժյուրիի առջև՝ միջազգային դատարանի օրինակով, որը գնահատում է թիմերին: Ազգային մրցափուլերում ընտրության հիմքում հաղթանակներն ու պարտությունները գրառելն է, որոնք պայմանավորված են գրավոր և բանավոր փուլերում թիմի վաստակած միավորներով: Գրավոր մրցափուլում թիմի միավորը որոշվում է նրա ներկայացրած հայցադիմումի ստացած գնահատականով, և այն կազմում է թիմի ընդհանուր միավորի 1/3-ը: Մնացած միավորները թիմը ստանում է բանավոր մրցափուլերում: Բանավոր մրցափուլերում թիմերի ստացած միավորները գումարվում են գրավորի միավորներին և կազմում թիմի ընդհանուր միավորը:

Միջազգային փուլը, որն ավանդաբար անց է կացվում Վաշինգթոնում, ընդգրկում է տարբեր մրցափուլեր: Նախնական մրցափուլերի ընթացքում յուրաքանչյուր թիմ մրցում է չորս անգամ, երկու անգամ՝ որպես հայցվոր և երկու անգամ՝ պատասխանող: Դրանց արդյունքում 16 լավագույն թիմերը տեղափոխվում են մրցույթի ընտրական մրցափուլեր: Դրանցում հաղթող ութ թիմերը մրցում են քառորդ եզրափակիչում, որից չորս թիմեր անցնում են կիսաեզրափակիչ: Ի վերջո, երկու թիմերը հանդիպում են եզրափակիչ՝ Ջեսափի աշխարհի գավաթի խաղարկության փուլում:

Մրցույթն ունի մի քանի մրցանակներ, այդ թվում՝ լավագույն թիմ, լավագույն հայցադիմում, լավագույն բանախոս, որոնք տրվում են և ազգային, և միջազգային փուլերում, և մի շարք մրցանակներ, որոնք տրվում են միայն միջազգային մրցափուլերի արդյունքում:

Ջեսափի մրցույթն այսօր կարևոր իրադարձություն է միջազգային իրավաբանական ասպարեզում և երիտասարդ իրավաբաններին թույլ է տալիս մասնագիտական զարգացում ապրել, ձևավորել մրցակցության ու ընկերության ոգին, ինչպես նաև թույլ է տալիս վերջիններիս հաղորդակից լինել այլ երկրների փորձին ու համակարգերին:

ՋԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մրցույթի պատմությունը

Ջեսափի մրցույթն առաջին անգամ կայացել է Հարվարդի համալսարանում՝ 1960թ.-ի մայիսի 3-ին, երբ մի խումբ ուսանողներ տարբեր մրցութային միջոցառումների միջոցով նպատակադրվել էին զարգացնել կրթությունը միջազգային իրավունքի բնագավառում: Ջեսափի առաջին մրցաշրջանը կոչվում էր «Միջազգային իրավունքի դատախաղ» և կազմված էր բացառապես Հարվարդի ուսանողներից: Բանավիճում էին երկու ամերիկացի ուսանողներ՝ Թոմաս Ֆարերը և Ուիլիամ Ջաբելը և երկու օտարազգի իրավաբան ուսանողներ՝ Բերնարդ Քլարքը՝ Նոր Զելանդիայից և Այվեն Հեդը՝ Կանադայից: Ջեսափի առաջին թեման կոչվում էր «Կուբայի ագրարային ռեֆորմի մասին գործ», որը գրվել էր այն ժամանակ Հարվարդի համալսարանի պրոֆեսորի օգնական, այնուհետև՝ Միջազգային արդարադատության դատարանի նախագահ Ստեֆան Շվեբելի կողմից:

1961թ.-ին Կոլումբիայի համալսարանում կայացավ առաջին միջհամալսարանական մրցաշրջանը: Ավելի ուշ մրցույթը վերանվանվեց ի պատիվ Միջազգային արդարադատության դատարանի դատավոր Ֆիլիպ Ջեսափի և հաջորդ երեք տարիների ընթացքում, ընդլայնվելով, ընդգրկեց տասնյակ ամերիկյան իրավաբանական դպրոցներ: 1962-ին Ջեսափի կազմակերպիչները հիմնեցին Միջազգային իրավունքի ուսանողական ընկերությունների ասոցիացիան (Association of Student International Law Societies, ASILS), որը կազմված էր միջազգային իրավաբանական միություններից և համալսարանների ներկայացուցիչներից: Ջեսափի մրցույթն արդեն համակարգվում էր ASILS-ի պատասխանատու ուսանողների կողմից: Հիմնադիր փաստաթղթերի համաձայն՝ այս կառույցի անդամ ուսանողները համոզված էին, որ միջազգային իրավունքի սկզբունքները պետք է բազմակողմանի ուսումնասիրված և յուրացված լինեն, և նրանք աշխատում էին կրթել իրենց և իրենց ընկերներին՝ միջազգային իրավունքի, միջազգային կազմակերպությունների ու ինստիտուտների սկզբունքների, իրավական համակարգերի համեմատության վերաբերյալ: ASILS-ը և Ջեսափի մրցույթը հովանավորվում էին Միջազգային իրավունքի ամերիկյան ընկերության (American Society of International Law, ASIL) կողմից, և տարիներ շարունակ Ջեսափի կառավարիչը գտնվում էր ASIL-ի գործադիր գրասենյակում՝ Վաշինգթոնում: 1970թ.-ին Հենրի Լյուս հիմնադրամը դրամաշնորհ տրամադրեց ASIL-ին՝ որպես մրցույթի կազմակերպման միջոց: Տասնյոթ տարի Ջեսափի կառավարիչը հանդիսանում էր ASIL-ի աշխատակիցը, զբաղվում էր բացառապես մրցույթի կազմակերպմամբ և կոչվում էր Ջեսափի ընկեր: 1987-ին ASILS-ը վերակառուցվեց Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի (International Law Students Association, ILSA), երբ մրցույթի շրջանակները բավականին լայն էին: Ջեսափի մրցույթի գոյությանը մեծապես նպաստեցին Ջեսափի Ընկերները (Friends of the Jessup, FOJ), որի կամավորները անսահման ջանքեր և ժամանակ էին ներդնում մրցույթի կազմակերպմանը: 1994թ.-ին կազմակերպությունը պաշտոնապես հաստատվեց որպես ոչ առևտրային, բարեգործական կազմակերպություն՝ ինքնուրույն իրավաբանական մարմին: 2003-ին ILSA-ի գրասենյակը Վաշինգթոնից տեղափոխվեց Չիկագո:

ILSA-ի առաքելությունն է միջազգային իրավունքի ուսումնասիրմանն ու յուրացմանը նպաստելը: Այն նպատակ ունի խրախուսել իրավաբան ուսանողների ու շահագրգիռ անձանց համագործակցությունը, մեծացնել տարբեր երկրների մշակույթների ու իրավական համակարգերի ուսումնասիրման հնարավորությունները և այլն: Այս երկակի առաքելության՝ կրթություն և համագործակցություն, հաջողությունը կենսական է աշխարհի խաղաղության ու շուկայական տնտեսության ապագայում: ILSA-ն իր տարբեր ծրագրերի միջոցով աշխատում է այս նպատակների ուղղությամբ, և Ջեսափի մրցույթը, իհարկե, նրա ամենամեծ ծրագրերից է: Տարեցտարի մրցույթը ավելի ու ավելի շատ ուսանողների է գրավում աշխարհի շատ երկրներից: Տարբեր պետությունների կառավարությունների կողմից ավելի ու ավելի մեծ պահանջարկ են ստանում մրցույթին ներկայացված աշխատանքները: Ամեն մի նոր մասնակցի հետ մրցույթը կայանում է և ավելի արդյունավետ պայմաններ ստեղծում միջազգային իրավունքի ոլորտում կրթության և, ինչու չէ, այդ ինստիտուտի կայացման գործում:

Մրցույթը տարբեր երկրներում

Ջեսափի մրցույթը միջազգային իրավունքի ոլորտում անցկացվող ամենահայտնի, սակայն ոչ միակ մրցույթն է: Նմանատիպ մրցույթներ անցկացվում են նաև այլ միջազգային կազմակերպությունների կողմից: Օրինակ, Իրավաբան ուսանողների եվրոպական ասոցիացիան (The European Law Student's Association) ևս վերջին հինգ տարիների ընթացքում կազմակերպում է նման բնույթի դատախաղ մրցույթ: Ասոցիացիան ունի 30 000 անդամ և տեղակայված է 35 երկրների համալսարաններում: Մրցույթի նպատակն է իրավաբան-ուսանողների գիտե-

լիքները համալրել փորձով և նպաստել նրանց շրջանակներում գլոբալիզացիային առնչվող հարցերի շուրջ քննարկումների անցկացմանը: Մրցույթն անցակցվում է բանավոր ընթացակարգով, որին կարող են մասնակցել աշխարհի բոլոր երկրների իրավաբան-ուսանողները: Այս մրցույթին ևս ուսանողները կարող են մասնակցել թիմերով: Մրցույթի ընթացքում կողմերի վեճի առարկա հանդիսացող հարցերը ներկայացնելիս թիմերը ներկայացնում են մի դեպքում՝ հայցվոր, մյուս դեպքում՝ պատասխանող կողմին, իսկ մրցույթի դատավորներն ընտրվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության իրավաբան-փորձագետներից:

Այնուամենայնիվ, Ջեսափի մրցույթը միջազգային իրավունքին վերաբերող ամենաընդգրկուն մրցույթն է: Ջեսափի մրցույթի մասնակիցների կարելի է հանդիպել այսօր աշխարհի բոլոր ծայրերում՝ Հնդկաստանից մինչև Ավստրալիա, Չինաստանից մինչև Կոնգո: Մրցույթի պատմությունն արդեն գրանցել է աշխարհի մոտ 120 երկրների մասնակցություն: Նախկին Ջեսափի մասնակիցներն ու դատավորները այժմ կազմում են տարբեր նախարարությունների, պետական ու միջազգային կազմակերպությունների աշխատակիցների գերակշիռ մասը: Ջեսափականների կարելի է հանդիպել աշխարհի լավագույն իրավաբանական ընկերություններում ու կորպորացիաներում, կրթական համակարգում և խորհրդարաններում: Եվ տարեցտարի մրցույթն ընդլայնում է իր շրջանակները: Կարծում ենք՝ ընթերցողին հետաքրքիր կլինի ծանոթանալ աշխարհի մի քանի երկրներում մրցույթի կազմակերպիչների ու համախոհների հետ:

Աշխարհում Ջեսափի կազմակերպիչները հիմնականում համալսարաններն ու իրավաբանական դպրոցներն են կամ մեծ իրավաբանական ընկերությունները, որոնք pro bono կազմակերպում են «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը:

Օրինակ Կանադան ունի մրցույթին մասնակցելու շուրջ երեսունհինգ տարվա պատմություն: 1960-ից մինչև 1972թ.-ը երկիրը ինքնուրույն չի մասնակցել մրցույթին, բայց կանադացի ուսանողները ամերիկյան թիմերի կազմում եղել են մրցույթի մասնակիցներ: Սկսած 1973թ.-ից՝ Կանադան սկսեց անցկացնել ազգային ընտրական մրցույթ՝ որոշելու համար այն իրավաբանական դպրոցները, որոնք կներկայացնեին երկիրը միջազգային մրցույթում:

Ուկրաինայում Ջեսափի մրցույթը կազմակերպվում է 1996թ.-ից: Արդեն 4 տարի է, որ «Մագիստրոս և ընկերներ» իրավաբանական ընկերությունը հանդիսանում է Ուկրաինայում Ջեսափի մրցույթի հիմնական կազմակերպիչ ու հովանավորը: Ընկերությունը 2005 թ.-ին մեծ շուքով նշեց իր 8-րդ տարեդարձը: Հիմնադրման օրից այն դինամիկ կերպով զարգանում է և ներկայումս կարող է ներկայացնել խոշորագույն տեղական և միջազգային կազմակերպությունների շահերը, գրասենյակի

իրավաբանները աշխատում են երկրի առաջատար ընկերությունների հետ: «Մագիստրոս և ընկերներ» իրավաբանական ընկերությունը մեծ հեղինակություն է վայելում արբիտրաժային և դատական պրակտիկայի ասպարեզում: Նրանք ներկայացնում են հաճախորդների շահերը ընդհանուր և հատուկ արբիտրաժային դատավարություններում՝ Ուկրաինայում, Եվրոպայում և ԱՊՀ երկրներում, ինչպես նաև օգտագործում են վեճերի լուծման այլընտրանքային եղանակներ: «Մագիստրոս և ընկերներ»-ի աշխատակազմի կորիզը կազմում են նոր սերնդի իրավաբանները: Ընկերությունը գտնում է, որ Ջեսափի մրցույթը նպաստում է Ուկրաինայի երիտասարդության իրավագիտակցության ու կրթության որակի բարձրացմանը: Արդեն 2 տարի է, որ մրցույթն անց է կացվում Ուկրաինայի Գերագույն տնտեսական դատարանի նախագահի հովանավորությամբ՝ Գերագույն տնտեսական դատարանի նիստերի դահլիճում: Մրցույթի դատավորների կազմում ամեն տարի ընդգրկվում են համաշխարհային ճանաչում ունեցող ընկերությունների առաջատար իրավաբաններ՝ Ուկրաինայից և արտերկրից: Ի դեպ՝ մրցույթը անց է կացվում անգլերենով, ինչը, «Մագիստրոս և ընկերներ» իրավաբանական ընկերության կարծիքով, նպաստում է ուսանողների աշխարհայացքի ընդլայնմանն ու մասնագիտական բնագավառում անգլերեն լեզվի զարգացմանը:

Մեքսիկայում Ջեսափի մրցույթը կազմակերպում է Միջազգային և համեմատական իրավունքի փորձագետների խորհուրդը՝ COLADIC: Այն բազմազգ, ոչ կառավարական, ակադեմիական մարմին է, որը հիմնադրվել է լատինաամերիկյան ինը երկրների կողմից 1994թ.-ին՝ Մեխիկոյում: Խորհուրդը կազմված է ուսանողներից, որոնց միավորում է ընդհանուր հետաքրքրությունը միջազգային և համեմատական իրավունքի ոլորտներում: Կազմակերպության առաքելությունն է աջակցել ուսանողների միջազգային համայնքի կրթությանը, առաջադեմ ուսանողներին և այն բոլորին, որոնք կիսում են կազմակերպության հետաքրքրություններն ու առաքելությունը: Այն իր համախոհների հետ աշխատում է միջազգային համայնքի վիճահարույց խնդիրների լուծման, իրավունքի գերակայության և ժողովրդավարության հաստատման ուղղությամբ:

Բրազիլիայում Ջեսափի մրցույթը տարբեր տարիների կազմակերպվել է երկրի մի շարք համալսարանների կողմից: 2006թ.-ին մրցույթի կազմակերպիչն էր Ռիո Գռանդե դո Սուլի Կաթոլիկ Պոնտիֆիկատի համալսարանը: Համալսարանի պատմությունը սկսվում է Մարիստաս եղբայրություն եկեղեցական միությունից, որ հիմնադրվել է 1817թ.-ին՝ Լիոն քաղաքի մոտակայքում: 1900թ.-ին եղբայրության վանականները առաջին անգամ այցելեցին Ռիո Գռանդե դո Սուլ՝ տեղի եպիսկոպոսի հրավերով: Այդ օրվանից եղբայրության վանականները, միշտ հավատարիմ մնալով Մարիստաս եղբայրության՝ ուսուցանելու սկզբունքին,

Եվրոպայից դուրս՝ տարբեր երկրներում հիմնադրեցին ուսումնական կենտրոններ, որոնք համապատասխանում էին տեղի պահանջմունքներին: Այժմ համալսարանը կազմակերպում է Ջեսափի մրցույթը՝ մի շարք նպատակների իրականացման ուղությամբ. խթանելու համար միջազգային իրավունքի ուսուցումը, իրավաբանական կրթության զարգացումը, ուսանողների կողմից գրավոր աշխատանքների կազմման փորձը և բանավոր հմտությունների զարգացումը: Կազմակերպիչները բավականին լուրջ պահանջներ են դնում մասնակցել ցանկացողների համար՝ միջազգային իրավունքի իմացություն, հատկապես տվյալ տարվա թեմայի վերաբերյալ, անգլերենի տիրապետում գրավոր աշխատանքների՝ անգլերենով կազմման և բանավոր ելույթների համար: Մրցույթի բանավոր փուլը 2006թ.-ին անցկացվել է համալսարանի կենտրոնական մասնաշենքում:

Ռուսաստանում «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը հանդիսանում է Ուայթ էնդ Քեյս ընկերության մոսկովյան գրասենյակի կողմից իրականացվող ամենակարևոր բարեգործական ծրագիրը: Ընկերության մոսկովյան գրասենյակը բացվել է 1991թ.-ին և բավականին աշխատանք կատարել երկրի անցումային շրջանում: 2005թ.-ին The International Financial Law Review հանդեսի կողմից արժանացել է «2005թ.-ի Ռուսաստանի իրավաբանական ընկերություն» կոչմանը: Ընկերությունն ունի քսանհինգ ներկայացուցչություններ աշխարհի տարբեր ծայրերում: Ընկերությունը լայնածավալ բարեգործական աշխատանքներ է իրագործում հատկապես ՀԿ-ներին անվճար խորհրդատվություն մատուցելու ուղղությամբ, ինչպես նաև մասնակցում և անդամակցում է տարբեր բարեգործական նախաձեռնությունների: Ջեսափի մրցույթի անցկացմանն աջակցելը ունի ոչ միայն մասնագիտական, այլև սոցիալական դրդապատճառներ, քանի որ դրանով ընկերությունը պատրաստում է ինչպես իր ապագա գործընկերներին, այնպես էլ վաղվա հասարակության ակտիվ մի հատվածի: Ջեսափին մասնակցում են Ռուսաստանի տասնչորս տարածաշրջանների իրավաբանական բուհերի ուսանողներ:

Ղազախստանում Ջեսափը կազմակերպվում է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի իրավական նախաձեռնության (ABA/CEELI) գրասենյակի կողմից: ABA/CEELI-ն ունի իր ներկայացուցչությունը Ալմա-Աթայում: Իր ծրագրերի ընթացքում ABA/CEELI-ն աշխատել է Ղազախստանի իրավաբանների, ուսանողների ու դատավորների հետ: Իրավաբան ուսանողների համար CEELI-ն կազմակերպում է տարաբնույթ ուսուցումներ և հանդիսանում է Ղազախստանում Ջեսափի մրցույթի ազգային կազմակերպիչը: CEELI-ն Ղազախստանում իրավաբանական աջակցություն է ցուցաբերում մամուլի միջոցներին, նպաստում է կրթական համակարգի բարեփոխումներին և իրավաբան ուսանողների զարգացմանը՝

գտնելով, որ Ղազախստանի իրավաբանների նոր սերունդը պետք է կրի անհրաժեշտ հմտություններ ու գիտելիքներ և ներդնի դրանք քաղաքացիական հասարակության և իրավունքի գերակայության հաստատման գործում: CEELI-ին իրականացնում է մրցույթի կազմակերպումը և գտնում, որ մրցույթը հնարավորություն է ստեղծում ուսանողների համար՝ զարգացնել ու կիրառել իրենց գրավոր ու բանավոր փաստաբանական հմտությունները, տիրապետել դատավարական մարտավարությանն ու միջազգային իրավունքի դրույթներին;

Այսպիսով՝ աշխարհի տարբեր ծայրերում այսօր գիտակցվում է մրցույթի օգտակարությունն ու անհրաժեշտությունը և ամենահեղինակավոր համալսարանները, կազմակերպություններն ու ընկերությունները անշահախնդրորեն աջակցում են մրցույթին:

Աշխարհի տարբեր երկրներից մրցույթին մասնակցած իրավաբաններն այսօր շարունակում են համատեղել իրենց ջանքերը միջազգային իրավաբանական կրթության ու միջազգային իրավունքի զարգացման գործում: Շատերի համար Ջեսափն ավելին է, քան ուղղակի մրցույթ, այն յուրօրինակ մի միություն է, որի անդամները անընդհատ փոխանակում են իրենց փորձն ու հմտությունները, և փոխանցում այդ անգնահատելի ուժը ապագա սերնդին:

Մրցույթի անցկացման կարգն ու կանոնները

«Ֆ.Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի անցկացման կարգը միևնույնն է մրցույթին մասնակցող բոլոր երկրներում: Մրցույթի կազմակերպման ու անցկացման ընդհանուր կարգը սահմանվում է մրցույթի պաշտոնական կանոններով, իսկ յուրաքանչյուր երկրի ազգային փուլի առանձնահատկությունները՝ ազգային կառավարչի կողմից պաշտոնական կանոնների հիման վրա կազմվող ազգային կանոններով:

Ջեսափի մրցույթը բաղկացած է ազգային և միջազգային մրցափուլերից: Ազգային մրցափուլերի արդյունքում յուրաքանչյուր երկրի հաղթող թիմ իրավունք է ստանում մասնակցել մրցույթի միջազգային մրցափուլին: Վերջինս ավանդաբար անց է կացվում ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգթոնում: Մրցույթն անց է կացվում պաշտոնական կանոնների և հաստատված ժամանակացույցերի համաձայն՝ երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Ազգային մրցափուլի սկիզբը հայտարարելուց առաջ՝ մրցույթի ազգային կառավարիչը կազմում է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների ցանկը: Այնուհետև, մրցույթի գործադիր տնօրենից ստանալով մրցույթի կոնկրետ տարվա պաշտոնական կանոնները, ժամանակացույցն ու Հատուկ համաձայնագիրը (խնդիր), ազգային կառավարի-

չը կազմում է հայաստանյան մրցափուլի ժամանակացույցը, պաշտոնական կանոնների ազգային հավելվածները՝ ազգային կանոնները, և տալիս է հայտարարություն՝ մրցույթի վերաբերյալ: Հայտարարությունը և մրցույթի նյութերի փաթեթը բաժանվում են բոլոր իրավաբանական բուհերում և բուհերի իրավաբանական ֆակուլտետներում: Այնուհետև բուհերում սկսվում է թիմերի կազմավորումը:

Հայաստանի Հանրապետությունում մրցույթն անց է կացվում հայերեն լեզվով: Սակայն պլանավորվում է, որ մոտ ապագայում եզրափակիչ փուլը կանցկացվի անգլերենով:

Թիմեր: Մրցույթին մասնակցելու նպատակով յուրաքանչյուր բուհ իրավունք ունի ներկայացնել միայն մեկ թիմ՝ բաղկացած 2-5 հոգուց: Մրցույթին կարող են մասնակցել միայն այն ուսանողները, ովքեր դեռևս չեն ավարտել ուսումնական դասընթացը, քննությունները կամ պրակտիկան: Ըստ կանոնների՝ նրանք իրավունք չունեն աշխատելու իրավաբանական բնագավառի որևէ պետական մարմնում:

Թիմերի անդամները հավաքագրվում են մրցաշրջանին համապատասխանող ուսումնական տարվա ընթացքում՝ միայն մեկ բուհի ուսանող հանդիսանալու դեպքում: Լիադրույք ուսանողները, որոնք հավակնում են իրավունքի մագիստրոսի կամ համարժեք կոչման, կարող են գործադիր տնօրենի գրավոր համաձայնությամբ մասնակցել մրցույթին, եթե.

1) նրանք ներգրավվել են իրավունքի մագիստրոս կամ համարժեք ծրագրերի մեջ՝ նախնական ուսումն ստանալուց հետո ութ ամսվա ընթացքում,

2) այդ միջանկյալ ժամանակահատվածում չեն զբաղվել իրավաբանական գործունեությամբ կամ այնպիսի այլ աշխատանքով, որը նրանց առավելություն կարող է տալ մրցույթի մյուս մասնակիցների նկատմամբ,

3) որևէ այլ կերպ բավարարում են մրցույթի կանոնները:

Ուսանողներն իրավունք ունեն մրցույթին մասնակցել միայն երկու տարի: Գործադիր տնօրենը կարող է այն ուսանողների համար, որոնք նախորդ տարիների ընթացքում երկու անգամ մասնակցել են մրցույթի տարածաշրջանային կամ ազգային նախընտրական մրցափուլի կամ միջազգային մրցափուլի հանդիպումներին, թիմի կողմից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա չեղյալ համարել արգելքը, եթե դա բխում է մրցույթի հաջող անցկացման շահերից:

Թիմերի անդամները կարող են ընտրվել տվյալ բուհի համապատասխան մարմնի կողմից հաստատված ցանկացած եղանակով: Եթե նույն բուհից հինգից ավելի ուսանողներ կամ ավելի քան մեկ ամբողջական թիմ է ցանկանում մասնակցել մրցույթին, ապա բուհի համապատասխան մարմինը ներբուհական մրցույթի արդյունքում պետք է որոշի բուհը ներկայացնող թիմը: Ներքին մրցույթը պետք է անցկացվի

մրցույթի պաշտոնական կանոններին համապատասխան: Եթե ներքին մրցույթում օգտագործվում են Ջեսափի դատական գործերը, ապա պետք է վերցվեն միայն անցած դատական գործերը և ոչ թե ընթացիկ տարվա մրցույթի դատական գործը, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է գործադիր տնօրենի գրավոր համաձայնությունը:

Մրցույթի ազգային մրցափուլին կարող է մասնակցել տվյալ երկրի բուհում ուսանող ցանկացած անձ՝ անկախ ազգային պատկանելությունից: Ազգային կառավարիչները չեն կարող, առանց գործադիր տնօրենի գրավոր համաձայնության, ազգային պատկանելությանը վերաբերող պահանջներ դնել՝ իրենց որևէ բուհ ներկայացնող թիմ կազմավորելիս: Նրանց դիմումի մեջ պետք է հստակորեն շարադրված լինեն նման պահանջի հիմքերը և կցվեն ազգային կանոնների հավելվածին: Գործադիր տնօրենի անհամաձայնության դեպքում մասնակից բուհի բոլոր ուսանողներն իրավունք կունենան ներգրավվել տվյալ թիմում:

Ազգային կանոնների հավելվածի համաձայն՝ բոլոր ուսանողներին պետք է տրվեն Ջեսափի մրցույթին մասնակցելու հավասար հնարավորություններ, անկախ նրանց միջին գնահատականից կամ առաջադիմության հետ կապված այլ գործոններից, եթե իհարկե ուսանողը մասնակից բուհում չունի խիստ նկատողություն՝ ազատվելու վտանգով:

Մրցույթի մասնակցության հայտ: Թիմեր կազմելուց հետո բուհերի ուսանողները մրցույթի մասնակցության հայտ են ներկայացնում կազմակերպիչներին: Հայտն իրենից ներկայացնում է թիմում ներգրավված ուսանողների անձնագրերի, ուսանողական տոմսերի պատճենները, տվյալ բուհից տեղեկանք առ այն, որ թիմի անդամն այդ բուհի ուսանող է և որ կուրսում է սովորում, ինչպես նաև տեղեկություններ թիմի ավագի, թիմի մարզչի և թիմի անդամների վերաբերյալ (հասցե, հեռախոս, էլ.փոստի հասցե): Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ մեկ կամ մի քանի մարզիչ:

Սահմանված ժամանակամիջոցում բուհերից ստանալով մրցույթին մասնակցելու հայտերը՝ ազգային կառավարիչը լրացնում է գրանցման համապատասխան ձևեր, որոնք ուղարկվում են Վաշինգթոն՝ մրցույթի գործադիր տնօրենին:

Մրցույթին ավելի լավ պատրաստվելու համար գրանցված թիմերի անդամների հետ մրցույթի ազգային կառավարիչը գրավոր և բանավոր մրցափուլերից առաջ կազմակերպում է սեմինարներ՝ նվիրված փաստաբանական գրավոր և բանավոր հմտություններին, յուրաքանչյուր մրցափուլի անցկացման կարգին և այլն:

Նյութերի փաթեթներ: Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացնելուց հետո թիմերը ստանում են նյութերի երկու փաթեթները, որոնք օգնում են թիմերին հետազոտություններ կատարելու և գրավոր աշխատանքները՝ հայցադիմումները կազմելու գործում: Վերջիններս ուղարկվում են մրցույթի գործադիր գրասենյակից: Այդ նյութերը տրա-

մադրվում են՝ ընդհանուր միջազգային իրավունքի և մրցույթի իրավական խնդրի վերաբերյալ թիմերին ընդհանուր պատկերացում տալու նպատակով: Ընդ որում, որպես կանոն, նյութերի 2-րդ փաթեթը կազմվում է՝ հաշվի առնելով ամբողջ աշխարհում մրցույթին մասնակցող թիմերի հարցումները:

Նյութերի փաթեթներն իրենից ներկայացնում են միջազգային պայմանագրեր, դատական որոշումներ, գիտական հոդվածներ կամ այլ տեսակի նյութեր: Թիմերին թույլատրվում է իրենց հետազոտությունը կատարելիս օգտվել այդ նյութերից և իրենց հայցադիմումներում կամ բանավոր ելույթներում հղում անել դրանց, պայմանով, որ հայցադիմումի մեջ այդ նյութերին հղում անելիս պետք է նշել դրանց աղբյուրը:

2004թ.-ից Ջեսափի մրցույթին մասնակից թիմերի համար աննախադեպ հնարավորություն ստեղծվեց. թիմերին գործադիր տնօրենի կողմից տրամադրվում է Թոմսոն ընկերության մասնաճյուղի՝ «West»-ի WESTLAW օն-լայն իրավաբանական տվյալների բազայի մուտքի ազատ գաղտնաբառ (http://www.westlaw.com): Վեբ կայքն իրենից ներկայացնում է իրավաբանական շտեմարան և թիմերին հնարավորություն է ընձեռում ծանոթանալ Միջազգային Դատարանի կողմից քննված գործերին, դատական պրակտիկայի տարբեր դեպքերը քննարկող հոդվածներին, ինչպես նաև տարբեր երկրների դատարանների վարած գործերի հետ:

Հայցադիմումներ: Մրցույթի գրավոր փուլին մասնակցելու համար, ազգային կանոններով սահմանված ժամկետում, մրցույթին մասնակցող յուրաքանչյուր թիմ պետք է պատրաստի հայցվորի և պատասխանողի հայցադիմումներ: Բոլոր հետազոտությունների, գրավոր նյութերի և խմբագրական աշխատանքների հեղինակները պետք է լինեն թիմի անդամներ: Սակայն թիմին խորհուրդներով կարող են օգնել ֆակուլտետի դասախոսները, մարզիչները, գրադարանավարները, այլ մասնագետ հետազոտողներ, ինչպես նաև այլ խորհրդատուներ: Այսպիսի խորհրդատվությունը պետք է սահմանափակվի հարցերի ընդհանուր քննարկմամբ, հետազոտության աղբյուրներին առնչվող առաջարկություններով, բանավոր խոսքի տեխնիկայի վերաբերյալ խորհրդատվությամբ, իրավաբանական հետազոտության ընդհանուր մեթոդների ներկայացմամբ, ընդհանուր մեկնաբանություններով և փաստարկների կառուցվածքին առնչվող հարցերով, ուղղություն տրվի իրավաբանական աղբյուրների վերաբերյալ, հայտարարության տարբերակների ընտրության մեջ կողմնորոշմամբ, փաստարկների ներկայացման հերթականությամբ և ձևով, ինչպես նաև մրցույթի ընտրական փուլերի ընթացքում հայտարարությունների ներկայացման ձևի և մարտավարությունների վերաբերյալ:

Ջեսափի մրցույթն անաչառության և օբյեկտիվության նկատառումներով անց է կացվում անանուն: Ազգային կառավարիչների կողմից թիմերի գրանցման ձևերը գործադիր տնօրենի կողմից ստանալուց հետո, վերջինիս կողմից թիմերին տրվում է համարներ, որոնք բաշխվում են ազգային/տարածաշրջանային կառավարիչների կողմից:

Յուրաքանչյուր հայցադիմում պետք է պարունակի տվյալ թիմի համարը: Այն պետք է զետեղված լինի հայցադիմումի շապիկի վերին աջ անկյունում: Համարից հետո, հայցվորի կարգավիճակի դեպքում, կնշվի «A», իսկ պատասխանողի դեպքում՝ «R» (Օրինակ՝ 000 A-ն կդրվի 000 համարով Հայցվոր թիմի հայցադիմումի վրա):

Մասնակիցների, պետությունների և/կամ բուհերի անունները չպետք է նշվեն հայցադիմումի վրա կամ նրանում: Արգելված նշում պարունակող էջերը չեն օգտագործվում: Մրցույթի կառավարիչները ջնջում են թիմերի անդամների կամ բուհերի անունները՝ նախքան հայցադիմումը դատավորներին հանձնելը:

Գործադիր տնօրենը չպետք է հրապարակի թիմերի ինքնությունը: Այնուամենայնիվ, այն պարագայում, երբ դատավորը գտնում է, որ այս կամ այն հայցադիմումի գնահատումը ավելի արդյունավետ կլինի, եթե նրան տեղեկատվություն տրամադրվի տվյալ թիմի մայրենի լեզվի մասին, ապա դատավորը կարող է գործադիր տնօրենին դիմել՝ ճշտելու, թե արդյո՞ք տվյալ թիմի մայրենի լեզուն անգլերենն է, թե՝ ոչ:

Պաշտոնական կանոններով հայցադիմումների կառուցվածքին ներկայացվում են որոշակի պահանջներ: Հայցադիմումները պետք է բաղկացած լինեն հետևյալ մասերից.

ա) Տիտղոսաթերթ,

բ) Բովանդակություն,

գ) Օգտագործված գրականություն՝ համապատասխան էջահամարներով,

դ) Ընդդատության դիմում,

ե) Ներկայացվող հարցեր,

զ) Փաստերի շարադրանք,

է) Հայտարարությունների համառոտագիր,

ը)Հայտարարությունները՝ ներառյալ եզրակացությունն ու պաշտպանության մասին խնդրանքը:

Մրցույթի ազգային ժամանակացույցով սահմանված ժամկետներում թիմերը պետք է գրավոր աշխատանքները ներկայացնեն ազգային կառավարչին, որից հետո դրանք ուղարկվում են մրցույթի դատավորներին՝ գնահատման: Թիմերի ներկայացրած հայցադիմումները դատավորների կողմից գնահատվելուց հետո վերանայվում են ազգային կառավարչի կողմից՝ թերությունների դիմաց մրցույթի պաշտոնական կանոնների համաձայն սահմանված տուգանքներ նշանակելու համար:

Մրցույթի դատավորները: Մրցույթի դատավորները կազմում են մրցույթի հաջող անցկացման կարևորագույն օղակը, և նրանց ընտ-

րությունը բավականին պատասխանատու գործ է ազգային կառավարչի համար: Սովորաբար հայցադիմումները հանձնելու համար սահմանված ժամկետից 1,5-2 ամիս առաջ, ազգային կառավարչը կազմում է մրցույթին՝ որպես դատավոր ներգրավվելիք անձանց նախնական անվանացանկը, և նրանց ուղարկվում են հրավերք-նամակներ: Անհրաժեշտության դեպքում մրցույթի Ազգային կառավարիչն անձամբ հանդիպում է մրցույթի դատավորների թեկնածուների հետ և նրանց ներկայացնում տեղեկատվություն մրցույթի վերաբերյալ: Այնուհետև, կազմվում են մրցույթին՝ որպես դատավոր ներգրավվելիք անձանց վերջնական անվանացուցակը:

Համաձայն մրցույթի պաշտոնական կանոնների՝ հնարավորության դեպքում մրցույթը ցանկալի է անցկացնել երեք դատավորների կազմով: Ուսանողները չեն կարող հանդես գալ որպես դատավոր, բացառությամբ իրավունքի մագիստրոս և գիտական այլ կոչում ունեցող թեկնածուների, որոնք ուղղակի կապ չունեն այն թիմերի հետ, որոնց ելույթներն իրենք գնահատում են: Միջանկյալ մրցափուլերում կազմակերպիչը կարող է ներգրավել ավելի քան երեք դատավոր: Բացառիկ դեպքերում կառավարիչը կարող է թույլ տալ երկու դատավորի կազմով մրցույթի բանավոր փուլի իրականացումը, բայց դա պետք է իրականացվի միայն բացառիկ դեպքերում: Ոչ մի դեպքում չի թույլատրվում մեկ դատավորի կազմով ժյուրիով մրցույթի բանավոր փուլի իրականացումը:

Մրցույթի ոչ մի փուլում որևէ ֆակուլտետի խորհրդատու, մարզիչ կամ թիմի հետ կապ ունեցող ցանկացած անձ իրավունք չունի հանդես գալու որպես դատավոր: Բացառություններ կարող են լինել միջազգային մրցափուլի ժամանակ, երբ տվյալ անձնավորությունը հանդես է գալիս որպես դատավոր այն բանավոր մրցափուլի ժամանակ, երբ իր բուհի ներկայացրած թիմը չի մասնակցում տվյալ մրցափուլին, կամ էլ հանդես է գալու մեկ այլ մրցափուլի ժամանակ:

Մրցույթի ցանկացած փուլում և մակարդակում բացառվում է որևէ դատավորի մասնակցությունը մրցույթին, որը կապ ունի այն բուհի հետ, որը թիմ է ներկայացրել, ծանոթ է կամ այլ կերպ հարաբերվում է վերջինիս հետ, ինչը կարող է անճշտությունների տեղիք տալ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրվում է գործադիր տնօրենի կողմից: Դատավորի՝ տվյալ բուհի շրջանավարտը լինելու փաստը չի կարող հիմք հանդիսանալ դա՝ որպես խախտում դիտարկելու համար: Դատավորները պետք է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն տվյալ թիմի ելույթը գնահատելուց, եթե նրանք անձնական կամ մասնագիտական հարաբերություններ ունեն տվյալ բուհի հետ կամ տվյալ թիմի որևէ անդամի հետ, և, եթե այդ կապը կարող է ազդել նրանց անկողմնակալության վրա կամ ավելորդ անճշտությունների տեղիք տալ: Այնուամենայնիվ, դատավորները չպետք է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն մրցափուլին մասնակցելուց, եթե նրանք պարզապես ծանոթ են տվյալ թիմի անդամին, կամ տվյալ բուհի հետ որոշակի հարաբերություններ ունեն, կամ դրա անդամ են հանդիսանում:

Մրցույթի դատավորներին խորհուրդ է տրվում բանավոր մրցափուլի ավարտից հետո թիմերին խրախուսական խոսք հղել իրենց ելույթների վերաբերյալ: Դատավորներին առաջարկվում է նաև կատարել որոշակի մեկնաբանություններ, սակայն նրանք թիմերին չպետք է տեղեկացնեն իրենց անձնական կարծիքի կամ թիմի հավաքած ընդհանուր միավորների մասին, ինչպես նաև չպետք է ներկայացնեն այնպիսի տեղեկատվություն, ինչը կմատնանշի նրանց անձնական դիրքորոշումը և դատավորների հուշագրի բովանդակությունը:

Օգնականներ և հաշվողներ: Մրցույթի կազմակերպման և բնականոն ընթացքն ապահովելու գործում մեծ նշանակություն ունեն դատավորի օգնականներն ու հաշվողները: Մրցույթի կառավարիչները, պաշտոնական կանոնների համաձայն, կազմում են վերջիններիս նախնական անվանացանկը: Վերը նշված անձանց անվանացանկի հաստատվելուց հետո ազգային կառավարիչը նրանց հետ անց է կացնում սեմինար խորհրդատվություն, որի ընթացքում դատավորի օգնականներին և տուգանային միավորները հաշվողներին հանգամանորեն բացատրվում է մրցույթի ընթացքում իրենց կողմից իրականացվելիք գործունեության էությունը և տրամադրվում համապատասխան փաստաթղթեր: Նրանցից յուրաքանչյուրին տրվում է այն լսարանների համարները և այն դատավորների անվանացանկը, ում հետ նրանք պետք է աշխատեն մրցույթի ժամանակ:

Մինչև մրցույթի բանավոր փուլը՝ մրցույթի դատավորների համար ևս կազմակերպվում է խորհրդատվական սեմինար, որի ժամանակ դատավորներին տրամադրվում է մրցույթի պաշտոնական կանոններով նրանց համար նախատեսված նյութերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

Մինչև մրցույթի բանավոր փուլը՝ սահմանված ժամակացույցի համաձայն, թիմերի անդամների ներկայությամբ կատարվում է վիճակահանություն, որի արդյունքում որոշվում են մրցույթի բանավոր փուլի նախնական մրցափուլերին մրցող թիմերի զույգերը:

Բանավոր փուլ: Մրցույթի բանավոր փուլը սովորաբար տևում է երկու օր: Առաջին օրը անցկացվում են մրցույթի 1-ին, 2-րդ, 3-րդ նախնական մրցափուլերը, երկրորդ օրը՝ մրցույթի 4-րդ նախնական, կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերը:

Մրցույթի բանավոր փուլն ունի իր առանձնահատկությունները՝ յուրաքանչյուր թիմ 2 անգամ հանդես է գալիս հայցվոր, 2 անգամ՝ որպես պատասխանող: Մրցույթի բանավոր փուլը բաղկացած է հայտարարություններին հատկացված իննսուն (90) րոպեից: Յուրաքանչյուր կողմին տրվում է քառասունհինգ (45) րոպե: Բանավոր մրցափուլն

սկսելուց առաջ յուրաքանչյուր թիմ պետք է նախօրոք նախագգուշացնի դատավորի օգնականին, թե ինչպես են իրենք ցանկանում օգտագործել իրենց տրամադրված 45 րոպեն, այսինքն, թե ինչպես է այդ ժամանակը բաշխվելու ա) առաջին բանախոսի, բ) երկրորդ բանախոսի և գ) հայցվորի պնդման և դ) պատասխանողի առարկության համար:

Ոչ մի բանախոս չպետք է խոսի քսանհինգ (25) րոպեից ավել՝ ներառյալ պնդումն ու առարկությունը: Մեկ բանախոսի համար նախատեսված և չօգտագործված ժամանակը չի կարող օգտագործվել ոչ այլ բանախոսի կողմից, և ոչ էլ պնդման և առարկության համար: Յուրաքանչյուր մրցափուլի ընթացքում տվյալ թիմի ցանկացած անդամ կարող է հանդես գալ որպես բանախոս: Մեկ մրցափուլի ընթացքում տվյալ թիմից կարող են հանդես գալ միայն երկու բանախոսներ: Բացառիկ հանգամանքներում գործադիր տնօրենը կարող է միևնույն բանախոսին թույլատրել ելույթ ունենալ քսանհինգ (25) րոպեից ավել: Միջազգային մրցափուլում թարգմանիչ օգտագործող թիմերին հատկացվում է լրացուցիչ ժամանակ: Ցանկացած մակարդակի որևէ մրցափուլում հայտարարությունների հերթականությունը հետևյալն է.

Հայցվոր 1
Հայցվոր 2
Պատասխանող 1
Պատասխանող 2
Պնդում (Հայցվոր1 կամ 2)
Առարկություն (Պատասխանող1 կամ 2):

Մրցափուլի սկզբում թիմերին թույլատրվում է վերապահել տասը (10) րոպե՝ պնդման և առարկության համար: Թիմի անդամները դատավորի օգնականին պետք է նախքան մրցափուլի սկիզբը տեղյակ պահեն, թե արդյո՞ք իրենք կամենում են ժամանակ ստանալ այդ նպատակով և բանավոր հայտարարությունների սկզբում պետք է դա հայտնեն դատավորներին:

Չորս նախնական մրցափուլերի արդյունքում որոշվում են այն թիմերը, որոնք դուրս են գալիս կիսաեզրափակիչ փուլ, իսկ կիսաեզրափակիչների հաղթողները դուրս են գալիս եզրափակիչ: Եզրափակիչ փուլի հաղթող թիմը դառնում է չեմպիոն և իրավունք է ստանում ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը միջազգային մրցափուլում, իսկ հակառակորդ թիմը ճանաչվում է երկրորդը: Մնացած բոլոր թիմերի տեղերը որոշվում են նախնական փուլերից սկսած՝ նրանց գրաված տեղերի միջոցով: Մրցույթի արդյունքում որոշվում են նաև նախնական մրցափուլերի և ամբողջ մրցույթի լավագույն բանախոսները, ինչպես նաև լավագույն հայցադիմումը ներկայացրած թիմը:

Թիմերի ստացած միավորները: Մրցափուլում յուրաքանչյուր բանախոսի ստացած ընդհանուր միավորները որոշվում են բոլոր նախնական փուլերում նրա ընդհանուր միավորները գումարելու միջոցով

(հաշվի առնելով բանախոսի ստացած բոլոր տուգանային միավորները), և այդ ընդհանուր թիվը բաժանելով բանախոսի մասնակցած բոլոր նախնական մրցափուլերի թվի վրա: Բանախոսների գրաված տեղերի սանդղակը կազմվում է՝ սկսելով ամենաբարձր միավորներից:

Յուրաքանչյուր թիմի հայցադիմումի ընդհանուր միավորները որոշվում են տվյալ թիմի հայցվորի հայցադիմումի և պատասխանողի հայցադիմումի ընդհանուր նախնական միավորները գումարելու միջոցով՝ վեց դատավորների գնահատած ընդհանուր միավորներով, որոնց առավելագույն հնարավոր գումարը կազմում է 600: Թիմերի հայցադիմումների գրաված տեղերի սանդղակը կազմվում է՝ սկսելով ամենաբարձր միավորներ շահած հայցադիմումից: Միավորները հաշվելիս հաշվի են առնվում թիմերի ստացած տուգանքները:

Մրցույթի ընթացքում մրցույթի կառավարիչը իրավունք ունի թիմերին նշանակելու տույժեր: Կառավարչի այդ իրավասությունը կարելի է բաժանել երկու խմբի՝ ոչ հայեցողական և հայեցողական տույժեր: Հայեցողական և ոչ հայեցողական տույժերը թիմերի նկատմամբ կարող են կիրառվել կամ ընդհանուր կամ մասնավոր կարգով: Ընդհանուր տույժերը բխում են ընդհանուր տիպի խախտումներից և կիրառվում են թիմի նկատմամբ նրա բոլոր մրցափուլերում, ասենք՝ հայցադիմումը կառավարչին ուշ առաքելու համար:

Մասնավոր տույժը մասնավոր խախտում է ենթադրում և կիրառվում է թիմի նկատմամբ կոնկրետ մրցափուլում, ասենք՝ հայցադիմումը որևիցե թիմի ուշ առաքելու համար կամ կոնկրետ մեկ թիմի հանդեպ խափանարար վարքագիծ ցուցաբերելիս: Բոլոր տույժերը կիրառվում են առանձին վերցրած յուրաքանչյուր դատավորի նշանակած միավորների համար. օրինակ՝ տասնհինգ (15) միավորի տույժը, բազմապատկված երեք (3) դատավորով, միագումար կերպով կունենա քառասունհինգ (45) միավորի ազդեցություն: Յուրաքանչյուր թիմի նվազագույն արդյունքը մեկ դատավորի հաշվով հիսուն (50) միավոր է: Նվազագույն հաշվին հասնելուց հետո արդյունքներն այլևս չեն կրճատվում՝ անկախ տույժերի առկայությունից:

Մրցույթին մասնակցած յուրաքանչյուր թիմ մրցույթի ավարտից հետո ազգային կառավարչի կողմից ստանում է հետևյալ փաթեթը.

ա/ հայցադիմում գնահատող յուրաքանչյուր դատավորի գնահատման թերթիկի և նշանակված տուգանքների (եթե այդպիսիք կան), ինչպես նաև կցված դիտողությունների (եթե այդպիսիք կան) պատճենը,

բ/ մրցափուլի նախնական փուլերում բանավոր ելույթները գնահատող յուրաքանչյուր դատավորի գնահատման թերթիկի և նշանակված տուգանքների (եթե այդպիսիք կան), ինչպես նաև կցված դիտողությունների (եթե այդպիսիք կան) պատճենը,

գ/ մրցափուլի նախնական փուլերի բոլոր գրաված տեղերի սանդղակների պատճենը՝ ներառյալ հաղթանակների և պարտությունների

գրանցված միավորների ընդհանուր գումարները, բոլոր նախնական միավորների գումարը և բոլոր փուլային միավորների գումարը,

դ/ մրցափուլի նախնական փուլերում բանախոսների գրված տեղերի սանդղակների պատճենը՝ ներառյալ բանախոսի բոլոր ընդհանուր անհատական միավորները,

ե/ մրցափուլի նախնական փուլերում հայցադիմումների գրված տեղերի սանդղակների պատճենը՝ ներառյալ բոլոր ընդհանուր հայցադիմումների միավորները և

զ/ մրցափուլի միջանկյալ փուլերի ամփոփումը:

Մրցույթի ավարտից հետո հաղթող թիմի և լավագույնը ճանաչված հայցադիմումները թարգմանվում են և սահմանված ժամանակահատվածում ուղարկվում են Վաշինգթոն, ինչպես նաև տարվում են աշխատանքներ հաղթող թիմի մասնակցությունը միջազգային մրցափուլին ապահովելու նպատակով:

Ամեն տարի գարնանը ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգթոնում ընթացող միջազգային մրցափուլին մասնակցում են ազգային և տարածաշրջանային մրցույթներում հաղթող թիմերը:

Միջազգային մրցափուլը բաղկացած է 4 նախնական, ընտրական և եզրափակիչ մրցափուլերից: Նախնական փուլերի արդյունքում առաջին 16 թիմերը տեղափոխվում են մրցույթի ընտրական մրցափուլեր: Դրանցում հաղթող ութ թիմերը մրցում են քառորդ եզրափակիչում, որից չորս թիմեր անցնում են կիսաեզրափակիչ: Ի վերջո, երկու թիմերը հանդիպում են եզրափակիչ՝ Ջեսափի աշխարհի գավաթի խաղարկության փուլում:

Ջեսափի մրցույթի աշխարհի գավաթի հաղթող ճանաչված թիմը հռչակվում է Ջեսափի աշխարհի գավաթի չեմպիոն:

Մրցույթի միջազգային մրցափուլի առաջին օրը տեղի է ունենում բացման արարողությունը, երբ կազմակերպիչները ներկայացնում են թիմերը և բաժանում են որոշ նյութեր (մրցույթի ժամանակացույց, հուշանվերներ): Բացման արարողությունը մասնակիցների համար լավ հնարավորությունն է նախապես տեղեկանալու, թե որ ԲՈՒՀ-ի թիմը որ համարն ունի (միջազգային փուլում թիմերի ինքնությունը գաղտնի է միայն դատավորների համար, մասնակիցները ազատ են այն միմյանց հայտնելու): Նույն օրվա երեկոյան տեղի է ունենում վիճակահանությունը, որի արդյունքներով թիմերին տալիս են իրենց անհատական ժամանակացույցը և հակառակորդ թիմերի գրավոր հայցադիմումները: Ինչպես նշում են միջազգային մրցափուլին մասնակցած հայ ուսանողները՝ վիճակահանության արդյունքները բախտորոշիչ դեր են ունենում թիմի համար, քանի որ թույլ կամ ուժեղ հակառակորդների հետ մրցելը էապես ազդում է 1/8 եզրափակիչ դուրս գալու հավանականության վրա:

Հաջորդ օրը սկսվում է նախընտրական փուլը, որը տևում է չորս օր: Այդ ժամանակահատվածում յուրաքանչյուր թիմ ունենում է 4 հանդիպում (խաղ): Միջազգային մրցափուլում հանդիպումների գրաֆիկը շատ ավելի ազատ է, քան ազգային մրցափուլում:

Մրցանակներ: Ջեսափի մրցույթի աշխարհի Գավաթի խաղարկության ժամանակ տրամադրվում է երկու մրցանակ՝ հուշանվեր և Ջեսափի գավաթը, որը չեմպիոնի կողմից մեկ տարի պահվում է տվյալ բուհում: Ջեսափի մրցույթի աշխարհի գավաթի խաղարկության չեմպիոնը պատասխանատվություն է կրում Ջեսափի Գավաթի ապահովության համար այնքան ժամանակ, քանի դեռ այն գտնվում է իր տիրապետության ներքո, և պարտավորվում է նախքան հաջորդ տարվա միջազգային մրցափուլը Ջեսափի գավաթը պատշաճ կարգով վերադարձնել գործադիր տնօրենին:

Ազգային և տարածաշրջանային մրցափուլերում լավագույնը ճանաչված հայցադիմումները մասնակցում են հայցադիմումների «Հարդի Դիլլարդ» մրցանակի մրցույթին: «Հարդի Դիլլարդ» մրցանակի խաղարկությունում լավագույնը ճանաչված հինգ հայցադիմումները մասնակցում են «Ռիչարդ Բաքստեր» մրցանակի մրցույթին:

Գոյություն ունի Բաքստերի 2 մրցանակ. առաջինը սահմանված է լավագույն հայցվորի հայցադիմումի համար, իսկ երկրորդը՝ լավագույն պատասխանողի հայցադիմումի համար: Մրցանակը շնորհվում է լավագույն հայցվոր և լավագույն պատասխանող հայցադիմումներ ներկայացրած թիմերին: Բաքստերի մրցանակին արժանացած հայցադիմումները տպագրվում են ILSA-ի «Միջազգային և համեմատական իրավունք» ամսաթերթի համապատասխան տարվա համարում:

«Ջեսափի Ոգին» մրցանակը առաջին անգամ ստեղծվել է 1996թ.-ին և նախատեսված է այն թիմի համար, որը Ջեսափի մրցույթի ժամանակ լավագույնս է դրսևորում Ջեսափի ոգին, այն է՝ ընկերություն, գերազանց ուսումնական առաջընթաց, մրցակցություն և մրցակիցների արժանիքների ճանաչում: Մրցանակը տրվում է միջազգային մրցափուլի մասնակցիների ձայների մեծամասնությամբ կամ էլ ընտրվում է գործադիր տնօրենի կողմից՝ խորհրդակցելով թիմերի հետ: Մրցանակի հիմնական նպատակն է սահմանել չափորոշիչներ, որոնց շնորհիվ բոլոր մասնակիցները կձգտեն կառավարել իրենց գործունեությունը և մասնագիտական հմտությունները:

ՋԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մրցույթի պատմությունը Հայաստանում

Աշխարհում ընթացող քաղաքական գործընթացները վկայում են, որ պետությունները աստիճանաբար ավելի մեծ շահագրգռվածություն են

ցուցաբերում այլ պետությունների հետ համագործակցելու կամ միավորվելու, միջազգային կազմակերպություններին անդամակցելու և միջազգային հանրության կողմից սահմանված ու իրենց արդարացրած չափանիշները պետության ներսում կիրառելու գործում: Այս գործընթացներից զերծ չի մնում նաև Հայաստանի Հանրապետությունը: Իսկ միջազգային զարգացումներից հետ չմնալու համար պետք է լիովին տիրապետել միջազգային իրավունքին, միջազգային սովորութային իրավունքին ու միջազգային պրակտիկային:

Միջազգային չափանիշները սկսեցին կիրառվել նաև կրթական համակարգում, ինչի արդյունքում հայկական բուհերի իրավաբանական ֆակուլտետներում սկսեցին ոչ միայն պարտադիր կերպով ուսումնասիրել միջազգային իրավունքը, այլև գիտակցվեց ոչ ֆորմալ կրթության արդյունավետությունը և միջազգային փորձին անմիջականորեն հաղորդակցվելու անհրաժեշտությունը:

Միջազգային իրավունքի ոլորտին հայ հասարակությանը, հատկապես իրավաբան-ուսանողներին ծանոթացնելու նպատակով 2000թ.-ի նոյեմբերի 1-ին «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի իրավական նախաձեռնության (ABA/CEELI) հայաստանյան գրասենյակի կողմից Հայաստանում ներդրվեց «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը: Մինչև 2003թ.-ը մրցույթը կազմակերպվում էր ՀԵԻԱ-ի և ABA/CEELI-ի կողմից, իսկ 2004թ.-ից մրցույթը կազմակերպում է ՀԵԻԱ-ն՝ գործընկերների աջակցությամբ:

Իսկ ի՞նչ կարող է տալ մրցույթը Հայաստանի իրավաբանների նոր սերնդին: Առաջին հերթին՝ մրցույթը լավագույն առիթ է ՀՀ իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար՝ ծանոթանալու միջազգային և սովորութային իրավունքի նորմերին և նրանց կիրառման առանձնահատկություններին, հաղորդակցվելու իրավագիտության զարգացման միջազգային փորձին, բանավիճելու միջազգային արդիական հիմնախնդիրների շուրջ: Մրցույթի ներմուծումը Հայաստան հնարավորություն ընձեռեց ուսանողներին իրենց գործնական իրավական գիտելիքները ազատորեն ներկայացնել և ձեռք բերել միջազգային իրավունքի, դատական նախադեպերի, փաստաբանական բանավոր և գրավոր հմտությունների փորձ: Այն թույլ տվեց դառնալ այն ցանցի մի մասնիկը, որն արդեն 47 տարի համախմբում է լավագույն համալսարանների և նրանց ուսանողներին:

Նախորդ յոթ տարիների ընթացքում մրցույթին մասնակցել են հայաստանյան պետական և ոչ պետական բուհերի իրավաբանական ֆակուլտետների 43 թիմեր, իսկ հաղթող 7 թիմերը մասնակցել են Վաշինգթոնում անցակացվող միջազգային մրցափուլին:

Ջեսափի մրցույթի 2001թ.-ի ազգային մրցափուլում հաղթող ճանաչվեց Երևանի մենեջմենթի համալսարանի Գյումրու կրթահամալիրի իրավաբանական ֆակուլտետի թիմը: Մրցույթի երկրորդ մրցանակակիրն էր Սանկտ-Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի, տնտեսության և իրավունքի ինստիտուտի Երևանի մասնաճյուղը: Հաղթող թիմի անդամ Սարգիս Կնյազյանը ճանաչվեց մրցույթի լավագույն բանախոս: 2001թ.-ի ապրիլին Վաշինգթոնում կայացած միջազգային մրցափուլում հայաստանյան թիմը 69 թիմերի շարքում զբաղեցրեց 60-րդ հորիզոնականը:

2002թ.-ին ազգային մրցափուլի երկրորդ մրցանակակիրը Երևանի մենեջմենթի համալսարանի Գյումրու կրթահամալիրի իրավաբանական ֆակուլտետի թիմն էր, իսկ հաղթողը՝ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի թիմը: Մրցույթի լավագույն բանախոս ճանաչվեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի թիմի անդամ Հրաչյա Մարանգուլյանը: Թիմը միջազգային մրցափուլում 75 թիմերի շարքում զբաղեցրեց 72-րդ հորիզոնականը:

2003 և 2004թթ.-ի ազգային մրցափուլերում հաղթեց կրկին Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի թիմը: 2003թ.-ի ազգային մրցափուլում երկրորդ մրցանակին արժանացավ Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի թիմը, իսկ լավագույն բանախոս ճանաչվեց նույն թիմի անդամ Շուշանիկ Վարդանյանը: 2004թ.-ին երկրորդ տեղում էր Մոսկվայի նոր իրավաբանական ինստիտուտի Երևանի մասնաճյուղը ներկայացնող թիմը, իսկ «Լավագույն բանախոս» մրցանակն ստացավ ԵՊՀ-ի թիմը ներկայացնող Եղիշե Կիրակոսյանը: 2003թ.-ին ԵՊՀ-ի թիմը մրցույթի միջազգային մրցափուլի 83 թիմերի շարքում 50-րդն էր, իսկ 2004թ.-ին՝ 94 թիմերի շարքում 52-րդը:

2005թ.-ի Ջեսափի մրցույթի ազգային մրցափուլում հաղթող ճանաչվեց Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի թիմը, իսկ լավագույն բանախոս ճանաչվեց նույն թիմի անդամ Արա Խզմալյանը: Ազգային մրցափուլի երկրորդ մրցանակը ստացավ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի թիմը: Ապրիլին Վաշինգթոնում կայացած միջազգային մրցափուլում մեր թիմը զբաղեցրեց 80-րդ հորիզոնականը՝ 103 թիմերի շարքում:

2006թ.-ի ազգային մրցափուլի եզրափակիչում Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի թիմը հաղթեց ՄՅՈՒԴ իրավաբանական ինստիտուտի թիմին: «Լավագույն բանախոս» մրցանակը ստացավ հաղթող թիմի ներկայացուցիչ Արա Խզմալյանը: 2006թ.-ի միջազգային մրցափուլում մեր թիմը 99 թիմերից 89-րդն էր:

2007թ.-ի հայաստանյան մրցափուլի եզրափակիչ փուլին մասնակցում էին Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի և «Եվրասիա» միջազգային համալսարանի թիմերը: Եզրափակիչ փուլում այս տարի ևս հաղթող ճանաչվեց Ռուս-հայկական (Սլավոնական)

պետական համալսարանի թիմը, իսկ լավագույն բանախոս՝ նույն թիմի ավագ Արա Խզմալյանը:

2007թ.-ի մարտի 25-ից ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում մասնակցելով մրցույթի միջազգային մրցափուլին՝ Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը ներկայացնող թիմը միջազգային մրցափուլին մասնակցած 94 թիմերի շարքում գրավել է 54-րդ տեղը: Հայկական թիմի գրավոր աշխատանքը գրավել է 33-րդ տեղը հայցադիմումների «Հարդի Դիլլարդ» մրցույթին մասնակցած 94 գրավոր աշխատանքների շարքում:

Միջազգային մրցափուլերին մասնակցած թիմերի արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին հայաստանյան թիմերի ցուցաբերած արդյունքներն աստիճանաբար բարձրանում են, ինչը վկայում է այն մասին, որ հայ իրավաբան-ուսանողներն ավելի են գիտակցում միջազգային իրավունքի իմացության կարևորությունը և ավելի են տարվում Ջեսափի մրցույթով:

Այնուամենայնիվ, որքան էլ գոհացնող լինի միջազգային մրցափուլում հայկական թիմերի ցուցաբերած արդյունքների նկատելի աճը, մրցույթի կազմակերպիչները շարունակում են ամեն ինչ անել Հայաստանում մրցույթի կայուն զարգացումն ապահովելու համար՝ գիտակցելով, որ դեռևս բավականին ջանքեր են պահանջվում թե՛ լեզվի, թե՛ փաստաբանական բանավոր հմտությունների և թե՛ այլ կարևոր գործոնների առումով: Հենց այս խոչընդոտների վերացմանն ուղղված խնդիրն են իրենց առջև դնում և՛ մրցույթի կազմակերպիչները, և՛ Հայաստանի Ջեսափի ակումբը:

«2007 Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը Հայաստանում

Տարիներ շարունակ «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը աշխարհի գրեթե բոլոր երկրներում ծառայում է միասնական նպատակի՝ զարգացնելու երիտասարդ սերնդի իրավաբանների գիտելիքները միջազգային իրավունքի բնագավառում, պատրաստելու այդ ոլորտում հմուտ և բանիմաց իրավաբաններ: Արդեն յոթերորդ տարին է՝ մրցույթի այդ նպատակն իրագործվում է նաև Հայաստանի Հանրապետությունում:

«2007 Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլը կազմակերպվել էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի, Հայաստանի Իրավաբանական հիմնադրամի և «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության կողմից՝ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան և մի շարք այլ կազմակերպությունների աջակցությամբ: Այս տարի մրցույթի անցկացմանն իր

աջակցությունն է ցուցաբերել նաև ՀՀ Դատական դեպարտամենտը, որը մրցույթի բանավոր փուլի անցկացման համար տրամադրել էր տարածք Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում:

«2007 Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի թեման վերաբերում էր միջազգային կազմակերպություններում պետության անդամության հարցին:

Համաձայնագրում քննարկման առարկա էին ոչ անդամ պետությունների հանդեպ միջազգային կազմակերպության պարտականությունների շրջանակները, ինչպես նաև անդամ պետությունների իրավունքներն ու պարտականությունները ոչ անդամ պետությունների հանդեպ, արծարծված էին նաև միջազգային կազմակերպությունների և նրանց ոչ անդամ պետությունների միջև ծագած տարաձայնությունների լուծման համապատասխան մեխանիզմներին վերաբերող հարցերը:

Մրցույթին մասնակցության հայտ էին ներկայացրել 10 թիմեր՝ երևանյան և ՀՀ մարզերի բուհերից: Սահմանված ժամանակացույցին համապատասխան թիմերի կողմից ներկայացված գրավոր աշխատանքները ստուգվեցին մրցույթի դատավորների կողմից, որոնց կազմում ընդգրկվել էին միջազգային իրավունքի ոլորտում Հայաստանի լավագույն մասնագետներ՝ տարբեր պետական ու ոչ պետական մարմինների աշխատակիցներ, փաստաբաններ: Թիմերի անդամների համար անցկացվեցին գրավոր և բանավոր փաստաբանական հմտություններին վերաբերող սեմինարները, որոնք օգնում են մրցույթի մասնակիցներին իրենց գրավոր աշխատանքները սահմանված պահանջներին համապատասխան կազմելու և մրցույթի բանավոր մրցափուլում հնարավորինս լավ հանդես գալու գործում:

2007թ.-ի փետրվարի 9-ին և 10-ին «Գոլդեն Թուլիփ Երևան» հյուրանոցում և Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում տեղի ունեցավ «2007թ.-ի Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի բանավոր փուլը: 2007թ.-ի փետրվարի 9-ին և 10-ին տեղի ունեցան մրցույթի երեք նախնական փուլերը, իսկ մրցույթի եզրափակիչ փուլը կայացավ փետրվարի 10-ին «Գոլդեն Թուլիփ Երևան» հյուրանոցում: Մրցույթի եզրափակիչ մրցափուլի ժյուրիի դատավորներն էին ՀՀ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետի տեղակալ, ՀՀ արդարադատության 2-րդ դասի պետական խորհրդական Վրեժ Գասպարյանը, ՀՀ Գլխավոր դատախազության միջազգային իրավական հարաբերությունների վարչության ղեկավար Նելլի Հարությունյանը և ՀՀ Արտաքին գործերի նախարարության աշխատակազմի ղեկավար Շահեն Ավագյանը:

«2007թ. Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի հաղթող ճանաչվեց Ռուս-

հայկական (Սլավոնական) պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը ներկայացնող թիմը: «2007թ.-ի Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի լավագույն հայցադիմում ճանաչվեց նույն համալսարանի թիմի հայցադիմումը, իսկ թիմի ներկայացուցիչ Արա Խզմալյանը ճանաչվեց հայաստանյան մրցույթի լավագույն բանախոս:

Հայաստանյան մրցափուլը եզրափակվեց հանդիսավոր մրցանակաբաշխությամբ, որին մասնակցում էր նաև Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության կապերի բաժնի ղեկավար Թոմաս Միքնախտը:

Հայաստանյան մրցափուլի հաղթող և մասնակից թիմերի անդամներին, հայաստանյան մրցափուլի լավագույն բանախոսին պաշտոնական արարողությամբ շնորհվեցին համապատասխան հավաստագրեր, որոնք հանձնեցին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ Կ.Զադոյանը և մրցույթի ազգային կառավարիչ Լ. Աբգարյանը: Մրցույթի մրցանակաբաշխության արարողությունն ավարտվեց հյուրերի ելույթներով, որոնց ընթացքում նրանք ողջունեցին և կարևորեցին մրցույթը, շնորհավորեցին մասնակիցներին և պատրաստակամություն հայտնեցին այսուհետ ևս իրենց նպաստը բերել այս գործին:

Մրցույթի հայաստանյան մրցափուլում հաղթող ճանաչված Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը ներկայացնող թիմը 2007թ.-ի մարտի 25-ից ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում ներկայացրեց Հայաստանը «2007 Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի միջազգային մրցափուլում:

Միջազգային փուլում հայաստանյան թիմը հանդես է եկել չորս նախնական մրցափուլերում՝ երկուական անգամ որպես հայցվոր և պատասխանող: Որպես հայցվոր հայաստանյան թիմը հանդես է եկել Լեհաստանի ու Կանադայի Օտտավայի համալսարանը ներկայացնող թիմերի հետ և ճանաչվել է հաղթող: Որպես պատասխանող՝ հայաստանյան թիմը հանդես է եկել Մեքսիկան և Բելգիան ներկայացնող թիմերի հետ և կրել է պարտություն: Արդյունքում թիմը նախնական մրցափուլերին մասնակցած 94 թիմերի շարքում գրավել է 54-րդ տեղը:

Հարդի Դիլլարդի լավագույն հայցադիմումների մրցույթում հայաստանյան թիմի գրավոր աշխատանքը գրավել է 33-րդ տեղը 94 գրավոր աշխատանքների շարքում:

«2007 Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի՝ Ջեսափի գավաթի Շերմանի և Սթերլինգի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլին մասնակցել են Սիդնեյի համալսարանը (Ավստրալիա) և Լոնդոնի Քինգս քոլեջը (Միացյալ Թագավորություն) ներկայացնող թիմերը: «2007 Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի եզրափակիչ փուլում հաղթող է ճանաչվել Սիդնեյի համալսարանի թիմը (Ավստրալիա), իսկ եզրափակիչ փուլի լավագույն բանախոս՝ նույն թիմի բանախոս Լուկաս Բաստինը: «Ջեսափի Ոգին» մրցանակը շնորհվել է Լեսոտոյի ազգային համալսարանը ներկայացնող թիմին:

Ցուցաբերած լավ արդյունքները հայ իրավաբան-ուսանողներին տրվում են ոչ հեշտությամբ:

Մասնակիցները նշում են մի քանի դժվարություններ, որոնց հանդիպում են թիմերը միջազգային մրցափուլում: Մասնավորապես.

- չնայած այն հանգամանքին, որ թիմերի հանդիպումների գրաֆիկը շատ ավելի ազատ է, այսինքն՝ հանդիպումների միջև ընկած ժամանակահատվածն ավելի երկար է, քան ազգային փուլում, այնուամենայնիվ թիմերի զգալի մասը բնակվում են մրցույթների անցկացման վայրից որոշ հեռավորության վրա, ինչը հասկանալի անհարմարություններ է ստեղծում հանդիպումներին հաճախելու առումով:
- եթե ազգային փուլում կազմակերպիչները գրեթե միշտ հասանելի են թիմերի համար և ընթացիկ խնդիրներն արագ լուծում են ստանում, ապա միջազգային փուլում հաճախ անհնար է անմիջապես հաղորդակցվել պատասխանատու անձանց հետ, և հարցի ճշտումը կարող է երկար ժամանակ խլել: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է կազմակերպիչների հետ ճշտել միայն ամենակարևոր և անհետաձգելի հարցերը:
- ամենամեծ խնդիրը, որի առաջ են կանգնում հայաստանյան թիմերը միջազգային փուլում, լեզվի խնդիրն է: Հակառակորդ թիմերի մեջ շատ են անգլիալեզու, ինչպես նաև անգլերենին՝ ինչպես մայրենի լեզվի տիրապետող թիմերը: Թարգմանչի միջոցով հանդես գալու հնարավորությունը չափազանց թանկարժեք է և, ցանկացած դեպքում, բացասական ազդեցություն է թողնում բանավոր ելույթի ընդհանուր որակի (ժամանակի կորուստ, թարգմանչական սխալների արդյունքում առաջացող թյուրիմացություններ) և դատավորների կողմից ընկալման վրա (որոշ դատավորների կողմից թարգմանության օգտագործումը դիտվում է որպես բացասական գործոն): Այս խնդիրը գոնե մասնակիորեն լուծելու համար անհրաժեշտ է կարդալ մեծ ծավալի անգլիալեզու իրավաբանական գրականություն և աշխատել բանավոր անգլերեն խոսքի վրա:

Չնայած խոչընդոտներին, որոնց թիմերի անդամները հանդիպում են և ներպետական, և միջազգային մրցափուլերի ընթացքում, նրանք միշտ էլ մեծ ոգևորությամբ են խոսում Ջեսափի մրցույթի մասին և հաստատակամորեն պատրաստակամություն հայտնում հետագայում ևս մասնակցելու մրցույթին:

Մրցույթի կազմակերպիչները

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան հանդիսանում է Հայաստանում «Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հիմնադիրներից մեկը՝ կանգնած լինելով այս ավանդույթի ձևավորման ակունքներում: Մրցույթի հիմնադրման պահից ի վեր՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան համատեղել է իր և իր գործընկերների ջանքերը՝ լավագույն և արդյունավետ կերպով մրցույթը կազմակերպելու համար: 2007թ.-ին «Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի կազմակերպիչներն էին ՀԵԻԱ-ն, Հայաստանի իրավաբանական հիմնադրամը և «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը:

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995թ.-ին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մի խումբ ուսանողների և երիտասարդ իրավաբանների կողմից: Այն ՀՀ արդարադատության նախարարությունում՝ որպես հասարակական կազմակերպություն, գրանցվել է 1995թ.-ի մարտի 14-ին:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ստեղծման հիմնական նպատակն էր համախմբել նոր սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացմանը՝ որպես անկախ, ժողովրդավարական, իրավական պետություն: Հիմնադրվելուց հետո Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան ակտիվորեն ներգրավվեց Հայաստանի հասարակական կյանքում՝ նպատակ ունենալով իրականացնել իր առջև դրված խնդիրները: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի առաջին գործունեությունը նվիրված էր Հայաստանի օրենքների պարզաբանումներին և քարոզչությանը, որից հետո կազմակերպությունը իրականացրեց ծրագրեր՝ ուղղված հասարակական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի ստեղծմանը, ինչպես նաև հասարակական կազմակերպություններին իրավական աջակցության ցուցաբերմանը: Այնուհետև, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ծրագրերն ուղղվեցին սոցիալապես անապահով բնակչությանը անվճար իրավաբանական ծառայությունների մատուցմանը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Ստեղծման պահից Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան մեծ կարևորություն է տալիս երիտասարդ իրավաբանների մասնագիտական կարողությունների զարգացման համար պայմանների ստեղծմանը: Կազմակերպության առաքելությունն է՝ ձևավորել կրթված, մասնագիտական բարձր կարողություններ ունեցող, նոր մտածելակերպի տեր իրավաբանների սերունդ, որի գործունեությունը մեծապես կնպաստի Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան ստեղծեց իրավաբանական ռեսուրսների կենտրոն՝ բաղկացած ժամանակակից իրավաբանական գրադարանից, ժամանակակից տեխնիկական և տեղեկատվական միջոցներից: Սկսած 1999թ.-ից՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան սկսեց ակտիվորեն աշխատել մարզերում՝ ստեղծելով իր տարածքային գրասենյակները Վանաձորում, Գավառում, Գյումրիում, Կապանում, Գորիսում և Իջևանում:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան ունի բազմաթիվ տեղական և միջազգային կապեր, բազում գործընկերներ թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում: 1998թ.-ից կազմակերպությունն անդամակցում է Երիտասարդ իրավաբանների եվրոպական ասոցիացիային: 2004թ.-ից գործում է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի www.ayla.am պաշտոնական վեբ կայքը:

Կազմակերպությունն ունի հինգ մասնագիտական հանձնաժողովներ և Իրավաբան ուսանողների բաժանմունք: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի Իրավաբան ուսանողների բաժանմունքը հիմնադրվել է 2004թ.-ին: Այն համախմբում է շուրջ 20 իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների: Այն նպատակ ունի խթանել իրավաբան ուսանողների ինքնակազմակերպումը, ինքնազարգացումը և մասնագիտական պրակտիկայի կազմակերպումը: Իրավաբան ուսանողների բաժանմունքը իր գործունեությամբ նպաստում է իրավաբան ուսանողների կողմից հետազոտությունների իրականացման, հոդվածների տպագրման, գիտաժողովների ու մրցույթների կազմակերպման գործընթացներին:

Իրավաբան ուսանողների բաժանմունքի կողմից 2004թ.-ից հրատարակվում է Իրավաբան ուսանողների բաժանմունքի եռամսյա պարբերականը՝ «Իրավաբան ուսանող» լրատուն: Գործում է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի Իրավաբան ուսանողների բաժանմունքի՝ http://lsd.ayla.am պաշտոնական վեբ կայքը:

2000թ.-ից սկսած՝ «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը հանդիսանում է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կարևոր ծրագրերից մեկը:

Հայաստանի իրավաբանական հիմնադրամ

Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հիմնադրվել է 2003 թվականի օգոստոսի 23-ին և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում գրանցվել 2003 թվականի սեպտեմբերի 9-ին: Հիմնադրամի հիմնական նպատակներից է նպաստել ՀՀ-ում իրականացվող դատահիրավական բարեփոխումներին և ՀՀ-ում փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, փաստաբանների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և փաստաբանի դերի բարձրացմանը, ինչպես նաև նպաստել ՀՀ իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների կայացմանը, օժանդակել իրավաբանական բուհերում և բուհերի իրավաբանական ֆակուլտետներում ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

2005թ.-ից գործում է Հայաստանի իրավաբանական հիմնադրամի www.lawfoundation.am պաշտոնական վեբ կայքը:

2004թ.-ից սկսած՝ Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հանդիսանում է «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի համակազմակերպիչ:

Հայաստանի իրավաբանական հիմնադրամն աջակցել է «2007թ. Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի կազմակերպմանը՝ ցուցաբերելով անհրաժեշտ տեխնիկական օժանդակություն:

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերություն

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը հիմնադրվել է 1997թ.-ին: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը իր ստեղծման պահից ի վեր բարձրակարգ իրավաբանական ծառայություններ է մատուցում իր վստահորդներին: Ներկայումս ընկերությունը հանդիսանում է Հայաստանում գործող տեղական և միջազգային առաջատար իրավաբանական ընկերություններից մեկը, որը ռազմավարական և ապագային միտված մոտեցում է ցուցաբերում վստահորդների գործերի և կարիքների նկատմամբ: Ընկերության գրասենյակների ցանցը նրա ծառայությունները մատչելի է դարձնում հանրապետության ամբողջ տարածքում:

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» ընկերությունը ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ գործարար հաճախորդներին համապարփակ իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն է: Այն աշխատում է խոշոր, բազմազգ կորպորացիաների և ֆինանսական ինստիտուտների, ընտանեկան և մասնավոր բիզնեսը ներկայացնող հաճախորդների լայն

շրջանակների հետ: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը հանդիսանում է տեղական և միջազգային առաջատար ընկերությունների և հաստատությունների հետ աշխատող առաջնեկ իրավաբանական ընկերություններից մեկը:

Ընկերության հիմքն են կազմում նոր սերնդի իրավաբանները, ուստի ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում նրանց կրթությանն ու փորձին: Այս հանգամանքի հաշվի առմամբ՝ ընկերությունը մասնակցում է մրցույթի կազմակերպմանը, քանզի Ջեսափի մրցույթը գերազանց հնարավորություն է երիտասարդ իրավաբանների կողմից մասնագիտական փորձ ձեռք բերելու համար: Ընկերությունը հանդիսացել է նաև «2006թ.-ի Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի համակազմակերպիչը: Ընկերության վեբ կայքի հասցեն է www.la.am:

«2007 Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի աջակիցները

Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն

Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը հիմնվել է 1992թ.-ին: Դեսպանատունը իրականացնում է աջակցության ծրագրեր բաց քաղաքացիական հասարակության, շուկայական տնտեսության և տարածաշրջանում կայուն մթնոլորտի հաստատման ուղղությամբ: Դեսպանատունը պատասխանատու է Միացյալ Նահանգների ու Հայաստանի կառավարությունների միջև կապերի պահպանման և քաղաքացիներին դիվանագիտական ծառայությունների մատուցման համար: Ամերիկայի Միացյալ Նահանգների հանդիսացել է «Ֆ.Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի 2003-2005թթ.. հիմնական հովանավորը: 2006թ.-ին ևս Դեսպանատունը հոգացել է «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի ազգային մրցափուլի կազմակերպչական ծախսերը: Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան պաշտոնական վեբ կայքի հասցեն է www.usa.am:

Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունն աջակցել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային կազմակերպելու «2007թ.-ի Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլը՝ հոգալով հաղթող թիմի հայցադիմումների թարգմանությունների ծախսերը:

Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ

ՀՀ Դատական դեպարտամենտը ստեղծվել է 2006թ.-ին: Դատական դեպարտամենտը պետական կառավարչական հիմնարկ է, որն ապահովում է դատարաններին, դատավորների ընդհանուր ժողովին, դատարան-

ների նախագահների խորհրդին և արդարադատության խորհրդին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը:

Դատական դեպարտամենտը միջոցառումներ է ձեռնարկում՝ ուղղված դատական իշխանության արդյունավետ գործունեության համար պայմանների ստեղծմանը, իրականացնում է այդ ոլորտի կադրային քաղաքականությունը:

Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարան

Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանը ստեղծվել է ՌԴ և ՀՀ կառավարությունների համաձայնագրի հիման վրա, որը ստորագրվել է 1997թ.-ին Մոսկվայում: 1998թ.-ին ՀՀ կառավարությունը համապատասխան որոշում ընդունեց Երևանում Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի հիմնադրման մասին: Բուհի ստեղծման հիմնական նպատակներից է տարբեր մասնագիտություններով կրթության ու վերապատրաստման կազմակերպումը, երկու երկրների գիտական ու մասնագիտական պոտենցիալի զարգացումը՝ երկրների ձեռքբերումների ու փորձի կիրառմամբ: Բուհը իր գործունեությամբ նպաստելու է երկու երկրների ժողովուրդների լեզուների, պատմության ու ավանդույթների պահպանմանը, զարգացմանն ու փոխադարձ հարստացմանը:

Իր գործունեության ընթացքում բուհն առաջնորդվում է ՌԴ և ՀՀ Սահմանադրություններով և օրենսդրությամբ: Բուհի առաջնային խնդիրներից է այնպիսի մասնագետների պատրաստումը, որոնք գիտակցում են երկու երկրների անխզելի կապերի նշանակությունը և ընդունակ են կիրառելու իրենց գիտելիքները աշխարհի տարբեր կետերում:

Բուհում կրթական ծրագրերը համապատասխանում են ռուսաստանյան չափորոշիչներին և ընդգրկում են ազգային բաղադրամաս: Իրավագիտություն մասնագիտությամբ ուսանողների առաջին հավաքագրումն իրականացվել է 1999թ.-ին: Գնալով ուսանողների աճող քանակը ստիպեց ընդլայնել համալսարանի մասնագիտացումներն ու կառուցվածքը: Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի պաշտոնական վեբ կայքի հասցեն է www.rau.am:

2007թ.-ին բուհը հովանավորել է հաղթող թիմի մասնակցությունը միջազգային մրցափուլում՝ տրամադրելով ճանապարհածախսի գումարները: Սա մրցույթի պատմության մեջ դառնում է ավանդույթ և վկայում է բուհի կողմից իրավաբան-ուսանողների համար մրցույթի ունեցած դերի գիտակցման մասին: Բուհը 2006թ.-ին ևս հոգացել էր թիմի ճանապարհածախսը:

«Իրավաբան Ուսանողների Միջազգային Ասոցիացիա» (ILSA)

Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիան (International Law Students Association, ILSA) ոչ առևտրային կազմակերպություն է, որը համախմբում է ուսանող իրավաբանների և երիտասարդ փաստաբանների, որոնց գործունեությունն ուղղված է միջազգային իրավունքի ուսումնասիրությանն ու վերջինիս նպաստելուն: Միավորելով իրավաբանական դպրոցների ռեսուրսները՝ ասոցիացիան ձգտում է դրանք հասանելի դարձնել բոլոր անդամ հաստատություններին:

Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիան գոյություն է ունեցել տարբեր ձևերով ավելի քան 40 տարի: Նրա պատմությունը սերտ կապված է «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հետ: 1960թ.-ին Հարվարդի համալսարանի մի խումբ ուսանողներ կազմակերպեցին միջազգային իրավունքին նվիրված մրցույթ, որը և «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ»-ի սկիզբը հանդիսացավ: Հաջորդ մի քանի տարիների ընթացքում մրցույթը ընդլայնեց իր շրջանակները՝ դառնալով միջբուհական:

1962թ.-ին Ջեսափի կազմակերպիչները հիմնեցին Միջազգային իրավունքի ուսանողական ընկերությունների ասոցիացիան (Association of Student International Law Societies, ASILS), որը ոչ առևտրային կազմակերպություն էր՝ կազմված ԱՄՆ-ի իրավաբանական բուհերի ներկայացուցիչներից, և որն այնուհետև համակարգելու էր Ջեսափի մրցույթի աշխատանքները: Կազմակերպության հիմնադիրները գտնում էին, որ միջազգային իրավունքի սկզբունքներին ծանոթանալն ու դրանց տիրապետելը խիստ կարևոր է, ուստի նրանք իրենց գործունեությունը ուղղեցին միջազգային իրավունքի բնագավառում իրավաբան ուսանողներին՝ միջազգային իրավունքի սկզբունքների ուսուցման, իրավական համակարգերի համեմատության ուղղությամբ:

ASILS-ը և մրցույթը աջակցություն էին ստանում Միջազգային իրավունքի ամերիկյան ընկերության (American Society of International Law, ASIL) կողմից: Երկար տարիներ Ջեսափի գործադիր մարմինը գտնվում էր ASIL-ի գրասենյակներում: Հիմնադրումից քսանհինգ տարի անց Միջազգային իրավունքի ուսանողական ընկերությունների ասոցիացիան վերակազմակերպվեց Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի: Այն հնարավորություն է ընձեռում իր անդամներին կիրառելու համաշխարհային ռեսուրսների մեծ ցանցը:

Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիան խրախուսում է իրավաբան ուսանողների և շահագրգիռ այլ մարդկանց շփումն ու համագործակցությունը ողջ աշխարհում, մեծացնում է այլ մշակույթների ու իրավական համակարգերի ուսումնասիրման հնարավորությունը և ընդլայնում է միջազգային իրավունքի ոլորտում մասնագիտանալու հնարավորությունները: Այս երկակի՝ շփում և կրթություն, առաքելության հաջողությունը կենսական կարևորություն ունի աշխարհի խաղաղության ու հաղորդակցման համար:

Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիան իրականացնում է բազմաթիվ ծրագրեր, սակայն ամենամեծ ծրագիրը, իհարկե, Ջե-

սափի մրցույթն է, որի արդյունքները ասոցիացիան ամեն տարի ամփոփում է և հրատարակում գրքի ձևով:

Իր ստեղծումից ի վեր՝ Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիան կարևոր գործոն է հանդիսացել իրավաբան ուսանողների կողմից միջազգային իրավունքի նշանակության ուսումնասիրման հարցում: Այժմ կազմակերպությունն ապահովում է կրթությանը վերաբերող էական միջոցներ իրավաբանների ապագա սերնդի համար ողջ աշխարհում, որոնք կնպաստեն միջազգային իրավունքի և աշխարհակարգի զարգացմանը:

Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի պաշտոնական վեբ կայքի հասցեն է www.ilsa.org:

Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիան մեծ աջակցություն է ցուցաբերում ՀԵԻԱ-ին՝ մրցույթի միջազգային մրցափուլին հայաստանյան թիմերի մասնակցության առումով: 2006թ.-ին ասոցիացիան հոգացել է միջազգային մրցափուլում հայաստանյան թիմի մասնակցության հյուրանոցային ծախսերը, իսկ այս տարի աջակցել է հայաստանյան թիմին մրցույթի միջազգային մրցափուլի ընթացքում ԱՄՆ-ում հյուրընկալվելու հարցերում:

Ջեսափի մրցույթի կայացմանն օժանդակում են ոչ միայն կազմակերպությունները, այլև անհատները: Հերթական անգամ մրցույթի կայացմանն իր աջակցությունն է ցուցաբերել պարոն Բրայան Սմիթը, ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի փաստաբան, Ջեսափի մրցույթի ընկեր և մրցույթի դատավոր: Բրայան Սմիթը «2007թ. Ֆ.Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի միջազգային մրցափուլին հայաստանյան թիմի մասնակցության ամբողջ ընթացքում, անվերապահորեն աջակցել է հայաստանյան թիմին՝ թիմի անդամներին հյուրընկալելով իր տանը: Պարոն Բրայանը հայաստանյան թիմին հյուրընկալել էր նաև 2006թ.-ի մրցույթի միջազգային մրցափուլի ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋԵՍԱՓԻ ԱԿՈՒՄԲԸ

Ակումբի ստեղծումը

Հայաստանի Ջեսափի ակումբի ստեղծման գաղափարի ծագումը պայմանավորված էր նրանով, որ «Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի անցկացումը Հայաստանում արդեն դարձել էր օգտակար ավանդույթ, և առաջիկա խնդիր էր դարձել ոչ միայն մրցույթին հայ իրավաբան-ուսանողներին պարզապես մասնակցելու հնարավորությունն ապահովելը, այլև մրցույթի առավել մասսայականացումը, իրավաբան ուսանողների կողմից միջազգային իրավունքի բնագավառում գիտելիքների խորացումը, կատարելագործումը և ամրապնդումը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն կար այնպիսի մի մարմնի գոյության, որը կմիավորեր մրցույթով հետաքրքրվող, մրցույթի ոգով ապրող, միջազգային իրավունքի ոլորտում բանիմաց անձանց, և որի անդամները կարող էին միջազգային իրավունքի բնագավառում ունեցած իրենց գիտելիքներն ու փորձը փոխանցել երիտասարդ սերնդի իրավաբաններին:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, անվերապահորեն աշխատելով Հայաստանում Ջեսափի մրցույթի կայացման ուղղությամբ և մեկտեղելով իր և Ջեսափի մրցույթի բարեկամների ջանքերը, հիմնադրեց Հայաստանի Ջեսափի ակումբը:

Ակումբի ստեղծումն ունի հեռահար նպատակներ ոչ միայն մրցույթի ավանդույթների արմատավորման, այլև երիտասարդ իրավաբանների մասնագիտական զարգացման ուղղությամբ: Ակումբը, լինելով Ջեսափի մրցույթին և երիտասարդ իրավաբաններին աջակցող նորաստեղծ օղակ, արդեն իսկ կատարում է իր առաջին քայլերը: Ակումբը համախմբում է Ջեսափի մրցույթի մասնակիցների, դատավորների և այլ համախոհների, որոնք տարիներ շարունակ մասնակցել են մրցույթին կամ իրենց նպաստն են բերել մրցույթի կազմակերպման ու անցկացման պատասխանատու գործին:

2006թ. ապրիլի 7-ին Երևան հյուրանոցում տեղի ունեցավ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից հիմնադրված Հայաստանի Ջեսափի ակումբի անդամների առաջին ժողովը: Ժողովին մասնակցում էին «Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի կազմակերպիչներ, դատավորներ, մրցույթի մասնակիցներ և հայաստանյան մրցափուլի հաղթող թիմի անդամները:

Հայաստանի Ջեսափի ակումբի առաջին ժողովի ընթացքում քննարկվեց և ընդունվեց ակումբի կանոնակարգը, որն արտացոլում է ակումբի գործունեության առարկան ու նպատակները, ակումբի կառուցվածքը, ակումբի և նրա մարմինների կարգավիճակը: Ակումբի առաջին ժողովի ընթացքում ընտրվեց նաև ակումբի առաջին խորհրդի կազմը, որը կարևոր դեր է ստանձնելու ակումբի նպատակային գործունեության մեջ:

Ժողովի մասնակիցների կողմից քննարկեցին և հավանության արժանացան ակումբի 2006թ.-ի գործունեության հիմնադրույթները, որոնցից հատկապես կարևորվեցին Հայաստանում Ջեսափի մրցույթի տարածման ու մասսայականացմանը և միջազգային իրավունքում առկա արդի հիմնախնդիրների շուրջ քննարկումների կազմակերպումը:

Ակումբի կանոնակարգը

Հայաստանի Ջեսափի ակումբի կանոնակարգը ընդունվել է ակումբի մասնակիցների կողմից՝ 2006թ.-ի ապրիլի 7-ին կայացած ակումբի մասնակիցների ժողովի ընթացքում: Կանոնակարգը հաստատվել է ՀԵԻԱ-ի վարչության 2006թ.-ի ապրիլի 10-ի որոշմամբ: ՀԵԻԱ-ի վարչության կողմից Հայաստանի Ջեսափի ակումբի համակարգող է նշանակվել Արփինե Եղիկյանը:

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
Հայաստանի Ջեսափի ակումբի

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության (հետագա տեքստում՝ ՀԵԻԱ) Հայաստանի Ջեսափի ակումբը» (հետագա տեքստում՝ ակումբ) ՀԵԻԱ-ի կառուցվածքային ստորաբաժանումն է, որը ստեղծվել է ՀԵԻԱ-ի վարչության 07.04.2006 թ.-ի որոշմամբ:

1.2. Ակումբը գործում է ՀՀ օրենսդրությանը, ՀԵԻԱ-ի կանոնադրությանը և սույն կանոնակարգին համապատասխան:

1.3. Ակումբի անվանումն է.
Հայերեն՝ «Հայաստանի Ջեսափի ակումբ», կրճատ՝ Ջեսափի ակումբ:
Անգլերեն՝ Jessup Club of Armenia, կրճատ՝ Jessup Club:

1.4. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռախոս՝ 54-01-99, ֆաքս՝ 58-02-99, էլ. փոստ՝ jessup@ayla.am, վեբ կայք՝ http://jessup.ayla.am:

2. ԱԿՈՒՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Ակումբի գործունեության առարկան և նպատակներն են.
ա) կազմակերպել քննարկումներ, երկխոսություններ, սեմինարներ միջազգային արդի խնդիրների շուրջ,
բ) նպաստել Հայաստանում «Ֆ.Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի կազմակերպմանը,
գ) նպաստել Հայաստանում Ջեսափի մրցույթի մասսայականացմանը, կարևորության գիտակցմանը, դերի և նշանակության բարձրացմանը,
դ) նպաստել Հայաստանում մրցույթի ավանդույթների արմատավորմանը և շարունակականության ապահովմանը,
ե) նպաստել Հայաստանում իրավաբան ուսանողների կողմից միջազգային իրավունքի յուրացմանը, այդ բնագավառում գիտելիքների խորացմանը, կատարելագործմանը և ամրապնդմանը,
զ) նպաստել իրավաբան ուսանողների հաղորդակցությանը իրավագիտության զարգացման միջազգային փորձին, խթանել այդ ոլորտում ինքնուրույն հետազոտությունների իրականացմանը,
է) համագործակցել իրավաբան ուսանողների, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ այլ երիտասարդական ու ուսանողական կազմակերպությունների հետ,
թ) նպաստել Հայաստանում Ջեսափի մրցույթի կազմակերպման և ակումբի նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցների հայթայթմանը:

3. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԿՈՒՄԲԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

3.1. Ակումբը իրավաբանական անձ չէ, գործում է ակումբի մասնակիցների կողմից ընդունված և ՀԵԻԱ-ի վարչության կողմից հաստատված կանոնակարգի հիման վրա ու համարվում է ՀԵԻԱ-ի կառուցվածքային ստորաբաժանումը:

3.2. Ակումբը կարող է համագործակցել ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների և անհատ անձանց, ինչպես նաև արտասահմանյան նմանատիպ ակումբների և այլ կազմակերպությունների հետ:

3.3. Ակումբը կարող է հրատարակել լրատուներ, տեղեկատվական թերթիկներ, ինչպես նաև իր գործունեության մասին տեղեկատվություն տարածել՝ օգտագործելով նաև ՀԵԻԱ-ի պաշտոնական վեբ կայքում տեղակայված Ջեսափի մրցույթի վեբ կայքը:

3.4. Ակումբը կարող է ունենալ պաշտոնաթղթեր, խորհրդանիշ և նույնացնող այլ հատկանիշներ:

4. ԱԿՈՒՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

4.1. Ակումբի գործունեությանը կարող է մասնակցել յուրաքանչյուր իրավաբան կամ իրավաբան-ուսանող, ով մասնակցել է Ջեսափի մրցույթին որպես դատավոր, դատավորի օգնական կամ մրցույթի մասնակից, հետաքրքրված է ակումբի նպատակներով և գործունեությամբ:

5. ԱԿՈՒՄԲԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5.1. Ակումբի մարմիններն են ակումբի համակարգողը և ակումբի խորհուրդը:

5.2. Ակումբի համակարգողը հանդիսանում է ակումբի գործադիր մարմինը, որը նշանակվում է ՀԵԻԱ-ի վարչության կողմից:

5.3. Ակումբի համակարգողը՝
ա) իրականացնում է ակումբի ընթացիկ գործունեությունը,

բ) ակումբի խորհրդի ընդունմանն է ներկայացնում ակումբի գործունեության ամենամյա աշխատանքային պլանի, պլանում կատարված փոփոխությունների և ծրագրերի առաջարկների նախագծերը, իսկ ՀԵԻԱ-ի նախագահի հաստատմանը՝ ակումբի խորհրդի կողմից ընդունված պլանը, պլանում կատարված փոփոխությունները և ծրագրերի առաջարկները,

գ) ակումբի մասնակիցների թվից կարող է ընտրել ակումբի գործունեության տարբեր ուղղությունների կամ կոնկրետ ծրագրի կամ միջոցառման պատասխանատուներ, ձևավորել աշխատանքային խմբեր և այլ մարմիններ, նշանակել դրանց ղեկավարներ,

դ) վարում է ակումբի խորհրդի նիստերը՝ առանց քվեարկության իրավունքի,

ե) ստորագրում է ակումբի մասնակիցների և ակումբի խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերը,

զ) հանդես է գալիս ակումբի անունից, ներկայացնում է ակումբը տարբեր մարմիններում և կազմակերպություններում, ընդունում է որոշումներ՝ կապված ակումբի կազմակերպման և գործունեության հետ,

է) վեցամսյա գրավոր հաշվետվություններ է ներկայացնում ակումբի խորհրդին և ՀԵԻԱ-ի նախագահին, իսկ տարեկան գրավոր հաշվետվություն՝ ակումբի մասնակիցներին և ՀԵԻԱ-ի նախագահին՝ ակումբի գործունեության մասին, կատարում է իր իրավասություններից բխող, ՀԵԻԱ-ի կանոնադրությանը և սույն կանոնակարգին չհակասող այլ աշխատանքներ, ՀԵԻԱ-ի նախագահի հանձնարարությունները:

5.4. Ակումբի 5 հոգուց բաղկացած խորհուրդը ընտրվում է ակումբի մասնակիցների կողմից 1 տարի ժամկետով և համարվում է ակումբի խորհրդակցական մարմինը:

5.5. Ակումբի խորհուրդը.

ա) ընդունում է ակումբի գործունեության ամենամյա աշխատանքային պլանը, պլանում կատարված փոփոխությունները և ծրագրերի առաջարկները,

բ) ակումբի գործունեության առարկայի և նպատակների վերաբերյալ ակումբի համակարգողին ներկայացնում է առաջարկություններ,

գ) կատարում է իր իրավասություններից բխող, ՀԵԻԱ-ի կանոնադրությանը և սույն կանոնակարգին չհակասող այլ աշխատանքներ:

5.6. Ակումբի խորհուրդը իր հերթական նիստերը հրավիրում է իր կողմից սահմանված պարբերականությամբ: Ակումբի խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել խորհրդի անդամների մեծամասնության, ակումբի համակարգողի առաջարկով՝ ակումբի համակարգողի կողմից: Ակումբի մասնակիցները անարգել կերպով կարող են մասնակցել ակումբի խորհրդի նիստերին:

6. ԱԿՈՒՄԲԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Ակումբի գույքը և միջոցները գոյանում են ՀԵԻԱ-ի կողմից տրամադրված միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

6.2. Ակումբը գույքի և միջոցների նկատմամբ ունի տիրապետման և օգտագործման իրավունք:

6.3. Ակումբը կարող է ունենալ ընթացիկ հաշիվ, որի միջոցները կարող են ծախսվել ՀԵԻԱ-ի նախագահի կողմից հաստատված նախահաշվով:

6.4. Ակումբի գործունեության և ֆինանսական միջոցների օգտագործման հաշվետվությունները հաստատում է ՀԵԻԱ-ի նախագահը:

6.5. Ակումբին պատկանող գույքը օգտագործվում է իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար:

Ակումբի գործունեությունը 2006թ.-ի ընթացքում

Ակումբի գործունեության առաջնայնությունների սահմանումը հանդիսացավ ակումբի մասնակիցների առաջին քայլը: Հիմնվելով ակումբի կանոնակարգին՝ ակումբը յուրաքանչյուր տարի պետք է մշակի և ընդունի իր գործունեության տարեկան աշխատանքային պլանը:

2006թ.-ի ընթացքում Ջեսափի ակումբի գործունեության ուղղություններից առավել կարևորվեցին Հայաստանում Ջեսափի մրցույթի տարածմանն ու մասսայականացմանը և միջազգային իրավունքի բնագավառում ուսանողների գիտելիքների զարգացմանն ուղղված գործունեության իրականացումը: 2006թ.-ին ձեռնարկված միջոցառումները կարելի է համարել բավարար: Ակումբի գործունեության առաջին քայլերից էր մրցույթին վերաբերող գրքույկի և լրատուների տպագրումը: Ապրիլին հրատարակվեցին «Ջեսափի մրցույթը Հայաստանում և աշխարհում» խորագրով գրքույկը և Ջեսափի ակումբի լրատուի 1-ին և 2-րդ համարները, որոնք բաժանվեցին Ջեսափի մրցույթի և ակումբի մասնակիցների, իրավաբան-ուսանողների և մրցույթով հետաքրքրվող այլ անձանց շրջանակներում:

Գրքույկը մանրամասն տեղեկատվություն է տրամադրում մրցույթի հիմնադրման ու զարգացման, հայաստանյան մրցափուլի հիմնադիրների, կազմակերպիչների ու հովանավորների վերաբերյալ,տարբեր տարիներին հայաստանյան թիմերի ցուցաբերած արդյունքների, ինչպես նաև Ջեսափի ակումբի վերաբերյալ:

Ջեսափի ակումբի լրատուի առաջին համարը տեղեկատվություն է տրամադրում «Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հիմնադրման ու զարգացման վերաբերյալ, Հայաստանում մրցույթի հիմնադիրների, հայաստանյան թիմերի՝ մրցույթում ցու-

ցաբերած արդյունքների մասին, ինչպես նաև ներկայացնում է մրցույթի դատավորների ու մասնակիցների կարծիքները մրցույթի հայաստանյան մրցափուլի մասին:

Իսկ Ջեսափի ակումբի լրատուի երկրորդ համարը պատմում է Ջեսափի ակումբի հիմնադրման ու նպատակների, ակումբի մասնակիցների ու մարմինների մասին: Լրատուն նաև տեղեկություններ է հաղորդում Ջեսափի ակումբի շրջանակներում կազմակերպված՝ «Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի հիմնախնդիրը միջազգային իրավունքում» խորագրով քննարկման մասին, քննարկման ընթացքում վերլուծված և մեկնաբանված՝ ԼՂ կարգավիճակին վերաբերող փաստերի մասին:

Ինչպես նշվել է, ակումբի նպատակն է նաև միջազգային նշանակության ամենատարբեր հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումների ու բանավեճերի կազմակերպումը: Այս միջոցառումների նպատակն է բազմակողմանի ուսումնասիրել և դիրքորոշումներ հայտնել այսօր աշխարհին հուզող մի շարք թեմաների, ազգամիջյան բախումների ու միջազգային իրավունքի ոլորտի տարբեր հարցերի շուրջ: Նմանատիպ միջոցառումների տրամաբանական շարունակությունը քննարկումների արդյունքում ակումբի մասնակիցների կողմից արտահայտված դիրքորոշումների հանրայնացումն է:

Հաշվի առնելով հայ ժողովրդի համար Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի կենսական նշանակությունը՝ 2006թ. մայիսի 5-ին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայում տեղի ունեցած Հայաստանի Ջեսափի ակումբի խորհրդի անդրանիկ նիստում որոշվեց նախաձեռնել և անցկացնել ղարաբաղյան հիմնահարցին նվիրված միջոցառումներ:

«Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի հիմնախնդիրը միջազգային իրավունքի տեսանկյունից»

Նախատեսված առաջին միջոցառումն անցկացվեց 2006թ.-ի մայիսի 27-ին: Ակումբի մասնակիցների շրջանակում կազմակերպվեց քննարկում՝ «Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի հիմնախնդիրը միջազգային իրավունքի տեսանկյունից» խորագրով: Քննարկման նպատակն էր վեր հանել իրավական այն հիմքերը, որոնք ապացուցում են Լեռնային Ղարաբաղի՝ պատմականորեն հայկական տարածք լինելու, ոչ օրինական կերպով Ադրբեջանին միացվելու, իսկ ներկայումս ինքնորոշման իրավունք ունենալու փաստերը: Ջեսափի ակումբի մասնակիցները մանրամասնորեն վերլուծեցին պատմական իրադարձությունները և փաստաթղթերը, որոնք կապված են Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հետ:

Ի մի բերելով քննարկման ընթացքում արծածված հարցերը և չխորանալով զուտ պատմական իրադարձությունների մեջ՝ ակումբի մասնակիցները եկան այն եզրահանգման, որ Լեռնային Ղարաբաղն օժտված է ինքնիշխան պետության բոլոր ատրիբուտներով՝ տարածք, բնակչություն, հանրային իշխանություն իրականացնող մարմիններ, սակայն պետությունը կարող է հանդիսանալ միջազգային իրավունքի սուբյեկտ միայն միջազգային իրավական ճանաչումից հետո: Միջազգային իրավական ճանաչումը պետության միակողմանի կամավոր ակտն է, որով նա նպատակահարմար է գտնում իրավաբանական հարաբերությունների մեջ մտնել ճանաչվող կողմի հետ: Լեռնային Ղարաբաղն այսօր ունի ներկայացուցչություններ մի շարք պետություններում՝ Հայաստան, Ռուսաստան, Ավստրալիա, Ֆրանսիա և Մերձավոր Արևելքի երկրներ: Միջազգային իրավունքը չի սահմանում որոշակի թիվ, որին համապատասխան պետությունների կողմից ճանաչվելուց հետո միայն պետությունը կարող է ճանաչվել միջազգային իրավունքի սուբյեկտ:

Ղարաբաղյան հիմնահարցի լուծումը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է գտնվում 1920-ական թվականներից և մինչ օրս լուծում չի ստացել: Այսօր ձևավորված քաղաքական իրողությունը վկայում է, որ Լեռնային Ղարաբաղի՝ որպես միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ ճանաչվելու փաստը կախված է մի քանի գերտերությունների կամքից: Հարցն այն չէ, որ գերտերությունները թշնամական կամ ոչ բարիդրացիական վերաբերմունք ունեն Հայաստանի, առավել ևս Ղարաբաղի նկատմամբ: Խնդիրն այն է, որ կոնֆլիկտի մյուս կողմի հետևում կանգնած է հարուստ և ուժեղ Թուրքիան, բացի այդ, ունենալով լայնածավալ տարածքներ և այսօր ճանաչելով Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը, հետագայում իրենք իսկ կարող են կանգնել որևէ տարածքի ինքնորոշման խնդրի առջև:

Քանզի նախատեսվում էր հանրայնացնել նմանատիպ քննարկումների արդյունքում ակումբի մասնակիցների կողմից արտահայտված դիրքորոշումները, Ջեսափի ակումբի լրատուի երկրորդ համարում տպագրվեց վերոնշյալ քննարկման մանրամասները և ակումբի անդամների եզրահանգումը:

Հանդիպում ՀՀ Արտաքին գործերի նախարարի հետ

Ղարաբաղյան հիմնախնդրին առնչվող մյուս միջոցառումը կայացավ 2006թ.-ի հուլիսի 10-ին: ՀՀ Արտաքին գործերի նախարարությունում տեղի ունեցավ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի և Հայաստանի Ջեսափի ակումբի մի խումբ անդամների հանդիպումը ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հետ:

Հանդիպման հիմնական նպատակն էր նախարարից լսել Հայաստանի արտաքին քաղաքականության, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման վերջին զարգացումների մասին և

ներկայացնել Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի և Հայաստանի Ջեսափի ակումբի գործունեությունը:

Հանդիպման ընթացքում ՀԵԻԱ-ի նախագահ Կարեն Ջադոյանի կողմից ներկայացվեց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի և Հայաստանի Ջեսափի ակումբի գործունեությունը, իսկ պարոն Օսկանյանի կողմից՝ Հայաստանի արտաքին քաղաքականության, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման վերջին զարգացումների շուրջ Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը, քննարկվող փաստաթղթի մանրամասների և հակամարտության լուծման գործընթացի հետագա հնարավոր զարգացումները:

Հանդիպման մեխը ղարաբաղյան հիմնահարցն էր, և մասնակիցների հարցերը հիմնականում նվիրված էին վերոնշյալ թեմային:

Հարցուպատասխանի ընթացքում պարոն Օսկանյանը անդրադարձավ ղարաբաղյան հակամարտության լուծման գործընթացի ներկա զարգացումներին, զուգահեռներ անցկացրեց բանակցային գործընթացի տարբեր փուլերում հակամարտող կողմերին արված առաջարկների միջև՝ նշելով Հայաստանի դիրքորոշումները դրանց վերաբերյալ, ինչպես նաև ներկայացրեց հնարավոր զարգացումները:

Հանդիպումն անցավ բավականին հետաքրքիր և աշխույժ մթնոլորտում: Քանի որ նախատեսված ժամանակում հնարավոր չեղավ անդրադառնալ հետաքրքրող բոլոր հարցերին, պատեհ համարվեց հետագայում շարունակել նմանատիպ հանդիպումները՝ քննարկման նյութ ունենալով Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների, Հայաստանում ժողովրդավարության և իրավական պետության կայացման և մեր երկրի զարգացման համար կարևոր այլ թեմաներ:

Հանդիպման վերջում Վարդան Օսկանյանին շնորհվեց Հայաստանի Ջեսափի ակումբի պատվավոր անդամի կոչում և հանձնվեց համապատասխան վկայագիր:

Այցելություններ ՀՀ բուհեր

Հայաստանի Ջեսափի ակումբի Կանոնակարգի 2.1 կետի համաձայն՝ ակումբի գործունեության նպատակներից է՝ նպաստել Հայաստանում Ջեսափի մրցույթի մասսայականացմանը, կարևորության գիտակցմանը, դերի և նշանակության բարձրացմանը: Այս նպատակի իրականացման նպատակով 2007թ.-ի գարնանը այցելություններ են կազմակերպվել բազմաթիվ բուհեր՝ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Ջեսափի ակումբի համակարգող Արփինե Եղիկյանը հանդիպումներ է ունեցել Երևանի և Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի մարզերի բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների հետ: Հանդիպումները կայացան Գյումրիում՝ «Պրոգրես» համալսարանի, «Հայբուսակ» ինստիտուտի Գյումրիի մասնաճյուղի, Երևանի Մենեջմենթի համալսարանի Գյումրիի մասնաճյուղի, «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանի, Ռուս-հայկական ժամանակակից հումանիտար համալսարանի Գյումրիի մասնաճյուղի, Վանաձորում՝ «Մխիթար Գոշ» համալսարանի, Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Գավառում՝ Գավառի պետական համալսարանի և Երևանում՝ երևանյան 14 բուհերի իրավաբան-ուսանողների հետ:

Հանդիպումներն անցնում էին շատ ակտիվ. ուսանողների մեծամասնությունը, նույնիսկ նրանք, ովքեր առաջին անգամ էին լսում մրցույթի մասին, ցուցաբերում էին ոգևորություն և պատրաստակամություն մասնակցելու մրցույթին:

Հանդիպումների ընթացքում ուսանողներին ներկայացվեց մրցույթը, մրցույթի ստեղծման պատմությունը աշխարհում և Հայաստանում, հայաստանյան թիմերի կողմից մրցույթին մասնակցության կարգը: Բոլոր բուհերի ուսանողներին բաժանվեցին մրցույթի վերաբերյալ գրքույկն ու Ջեսափի ակումբի լրատուները: Հանդիպումները հնարավորություն ընձեռեցին նաև պարզաբանելու այն խնդիրները, որոնք խոչընդոտում են իրավաբան-ուսանողներին մասնակցելու մրցույթին: Խնդիրներն ունեին և սուբյեկտիվ, և օբյեկտիվ հիմքեր, սակայն հիմնական խնդիրներից էր մրցույթի մանրամասների չիմացությունը, բուհերի մեծ մասում միջազգային իրավունքի մասնագետների բացակայությունը, ինչն էլ ծնում է ուսանողների անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ:

Հայաստանի Ջեսափի ակումբի գործունեության մասին տեղեկատվությունն առավել մատչելի դարձնելու նպատակով ստեղծվել և գործում է Ջեսափի ակումբի ինտերնետային էջը՝ http://jessup.ayla.am պաշտոնական վեբ կայքում: Ակումբի ինտերնետային էջից կարելի է տեղեկանալ ակումբի կառուցվածքի, անդամների, ակումբի ծրագրերի, կազմակերպվող միջոցառումների և այլ գործունեության, ինչպես նաև դրանց մասնակցության հնարավորության և կարգի մասին:

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ մրցույթի հայաստանյան մրցափուլի ազգային կառավարիչն է Արփինե Եղիկյան**:**

Հասցե՝ Հայաստան, ք.Երևան, 375010, Նալբանդյան 7, բն. 2

Հեռախոս՝ (374 10) 540199

Հեռապատճե՝ (374 10) 580299

Էլ. փոստ՝ jessup@ayla.am

Մրցույթի հայաստանյան մրցափուլի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն կարելի ստանալ «Ֆ.Ջեսափի անվան միջազգային ի-

ռավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի http://jessup.ayla.am պաշտոնական վեբ կայքից:

Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ մրցույթի գործադիր տնօրենն է Մայքլ Փեյլը:

էլ. փոստ՝ peil@ilsa.org

Մրցույթի միջազգային և ազգային մրցափուլերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն կարելի ստանալ Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի www.ilsa.org պաշտոնական վեբ կայքից:

Հայաստանի Ջեսափի ակումբի համակարգողն է Արփինե Եղիկյանը:

Հասցե՝ Հայաստան, ք.Երևան, 375010, Նալբանդյան 7, բն. 2

Հեռախոս՝ (374 10) 540199

Հեռապատճե՝ (374 10) 580299

էլ. փոստ՝ jessupclub@ayla.am

Հայաստանի Ջեսափի ակումբի գործունեության ու ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն կարելի է գտնել ակումբի ինտերնետային էջում, որը տեղակայված է «Ֆ.Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի http://jessup.ayla.am պաշտոնական վեբ կայքում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ներկայումս ընթացող գլոբալիզացման պայմաններում հրամայական է դառնում հաշվի նստել նաև միջազգային հանրության կողմից ընդունված չափանիշների հետ՝ չանտեսելով մերը: Կայացման փուլում գտնվող մեր հանրապետությունը, որը հարուստ է առավելապես մտավոր ներուժով, կարող է զարգանալ և միջազգային հանրության շրջանակում իր հեղինակությունն ու խոսքն ունենալ միայն այն դեպքում, երբ կարողանա ճիշտ օգտագործել իր ունեցած հնարավորությունները: Այդ գործում ծանրության բեռը դրվում է գալիք սերնդի ուսերին: Եվ յուրաքանչյուրի պարտքն է հնարավոր բոլոր միջոցներով աջակցելու նոր սերնդին՝ կատարելագործելու իր ներուժը՝ հայ ժողովրդի շահերին ծառայեցնելու նպատակով:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, գիտակցելով գալիք սերնդի դերը մեր երկրի զարգացման գործում, հնարավոր բոլոր միջոցներով փորձում է աջակցել վերջիններիս՝ այս դժվարին ա-

ռաքելության իրականացման ճանապարհին: Հայ իրավաբան-ուսանողների կողմից միջազգային չափանիշներին ծանոթանալու, դրանց ընդունելիության մասին սեփական կարծիք կազմելու համար նրանք պետք է անմիջականորեն ուսումնասիրեն այդ չափանիշները, զգան իրենց այդ չափանիշների կրողն ու կիրառողը: Այս առումով հիանալի հնարավորություն է ՀԵԻԱ-ի կողմից իր համախոհների անգնահատելի աջակցությամբ կազմակերպվող՝ «Ֆ.Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլին մասնակցությունը:

Այս բնագավառում անելիքները դեռևս շատ են, և Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան ու ջեսափականները շարունակում են ջանքեր չխնայել իրենց առջև դրված նպատակներին հասնելու և աշխարհին Ջեսափի մրցույթի արժանի ու մրցունակ թիմեր ներկայացնելու համար:

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
© ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ
© «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք, Երևան, Նալբանդյան 7, բն.2
հեռ.՝ 540199, ֆաքս՝ 580299
էլ.փոստ՝ ayla@ayla.am; la@la.am;
lawfoundation@lawfoundation.am

Ստորագրված է տպագրության 21.07.2007: Չափսը՝ 60 x 84 1/32:
Թուղթը՝ օֆսեթ - 1: Տառատեսակը՝ «Arial Armenian»:
Տպագրությունը՝ օֆսեթ: Ծավալը՝ 2,75 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ:

«Գևորգ - Հրայր» ՍՊԸ

հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
էլ. փոստ lusakn@rambler.ru

http://jessup.ayla.am

üÇÉÇß æ»ë³÷Ç ³Ýí³Ý Ù Çç³½³ÛÇÝ Çñí´áõÝù Ç ¹ ³ï ³Ë³ÕÕ

Հայաստանի իրավաբանական հիմնադրամ

Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հիմնադրվել է 2003 թվականի օգոստոսի 23-ին և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտ-րոնական մարմնում գրանցվե 2003 թվականի սեպտեմբերի 9-ին: Հիմ-նադրամի հիմնական նպատակներից է նպաստել ՀՀ-ում իրականացվող դատահիրավական բարեփոխումներին և ՀՀ-ում փաստաբանական ինստիտուտի զար-գացմանը, փաստաբանների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և փաստաբանի դերի բարձրացմանը, ինչպես նաև նպաստել ՀՀ իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների կայացմանը, օժանդակել իրա-վաբանական բուհերում և բուհերի իրավաբանական ֆակուլտետներում ուսումնա-ռության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: 2004թ.-ից սկսած Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հանդսիանում է «Ֆ.Ջեսափի անվան միջազգային իրա-վունքի դատախաղ մրցույթի հայաստանյան մրցափուլի համակազմակերպիչ: Հիմ-նադրամի պաշտոնական վեբ կայքի հասցեն է www.lawfoundation.am:

«Հայաստանի Երիտասարդ Իրավաբանների Ասոցիացիա հասարակական կազմակերպություն

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա (ՀԵԻԱ) հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995թ.-ին ԵՊՀ իրավա-բանական ֆակուլտետի մի խումբ ուսանողների և երիտասարդ իրավա-բանների կողմից: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի հիմնական նպատակն է զարգացնել նոր սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացմանը՝ որպես իրավական և ժողովրդավարական պետություն: Իր կա-նոնադրական նպատակների կատարման համար Հայաստանի երիտասարդ իրավաբան-ների ասոցիացիան իրականացնում է բազմազան ծրագրեր, այդ թվում՝ ուղղված իրավա-բանական գիտելիքների զարգացմանն ու տարածմանը: 2000թ.-ից սկսած Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան կազմակերպում է «Ֆ.Ջեսափի անվան միջ-ազգային իրավունքի դատախաղ մրցույթի հայաստանյան մրցափուլը: Ասոցիացիայի պաշտոնական վեբ կայքի հասցեն է www.ayla.am:

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ իրավաբանական ընկերություն

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ իրավաբանական ընկերությունը հիմնադրվել է 1997թ.-ին: Ընկերությունը իր ստեղծման պահից ի վեր բարձրակարգ իրավաբանական ծառա-յություններ է մատուցում իր վստահորդներին: Ներկայումս ընկերությունը հանդիսանում է Հայաստանում գործող տեղական և միջազգային առաջատար իրավաբանական ընկե-րություններից մեկը, որը ռազմավարական և ապագային միտված մոտեցում է ցուցա-բերում վստահորդների գործերի և կարիքների նկատմամբ: Ընկերության գրասենյակ-ների ցանցը նրա ծառայությունները մատչելի է դարձնում հանրապետության ամբողջ տարածքում: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ ընկերությունը ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ գործարար հաճախորդներին համապարփակ իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն է: Ընկերությունը աշխատում է խոշոր, բազմազգ կորպորացի-աների և ֆինանսական ինստիտուտների, ընտանեկան և մասնավոր բիզնեսը ներկայաց-նող հաճախորդների լայն շրջանակների հետ: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ իրավաբանական ընկերությունը հանդիսանում է տեղական և միջազգային առաջատար ընկերությունների և հաստատությունների հետ աշխատող առաջնեկ իրավաբանական ընկերություններից մեկը: Ընկերությունը հանդիսացել է «2007թ.-ի Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ մրցույթի համակազմակերպիչ: Ընկերության պաշտոնական վեբ կայքի հասցեն է www.la.am: